Հայկական պատմութեան փառաւոր և պայծառ անձնեարից և ժամանակակից մեծանշան մարդիկներից մին էր։ Հայկական սերունդները կհատուցանեն նորան յաւիտենական շնորհակալու մոքից և սրտի յիշատակը նորա անձնագիր ծառայութեան համար եկեղեցուն, որ կառավարումէր նա, և անբաւ ազգասիրական զգացմանքից համար դէպի Հայութիւնը և Հայ ազգը։ Արբազնագոյնի կեանքը բոլորովին արժանի է ուսումնասիրութեան, և այս պատճառով, նշանակելով այստեղ նորա աշխատանքների և քաջագործութիւնների համառօտ տեղեկութիւններ — ցաւումներ, որ նիւթերի պակասութիւնը թոյլ չէ տալիս մեզ ներկայացնել առաւելընդարձակ մանրաւմասեր։

**Ներսէս Վ-ը ծագումէ հին ազնիւ «Շահ—Ազեղեան» ազգից, որ շատ մեծարելի էր Հայերի մէջ, թէպէտ, չափազանց չքաւոր, և ծնվեցաւ 1760 թւականին (1) Աշտարակ գիւղում, որ երեսն Հայաստանի նշանաւոր վաճառատեղի էր, և դժունվումէ Արարատի մօտ ոչ հեռու Եփրատի աղբիւններից, 20 վերստ հեռաւորութեամբ էջմիածնից, և որտեղից դուրս է եկել արդէն Հայկական Կաթողիկոսներից մին, որ կրել է նոյն պէս Ներսէս անունը — մանաւանդ երջանիկ անունը Հայկա-**

(1) Հայկական Եկեղեցու Ծայրագոյն Պատրիարք—Կաթողիկոսի ընտրութիւն։ (Избрание Верховного Патриарха—Католикоса Армяно-Григорианской Церкви) պաշտօնական յօդված Ներքին Գործերի Դաշտարարութեան օրագրի մէջ; 1843 թ. № 9, էր. 379. Նոյնը կարդվումէ՝ «ասումէ ՀԿՊՕԿԱ բառակարգ բառական Ակադեմիա Մատենադարան» օրագիրը, 1857 թ. № 20—և օտարեկերպեա տեղիկութիւնների մէջ, որոնցից քաղելէ վերցիշված օրագրի խմբագրութիւնը կաթողիկոսի համառօտ կենացքութեան համար։ Բայց Ներքին Գործերի նախարարութեան օրագրի միւս պաշտօնական յօդվածի մէջ (օֆֆիցիալնայա ժարովա Մոնտերտա Բնութանիք ձեմ 1856 թ. № 10, 89, ապօւմէ), որ 1856 թւականին Ներսէս Կաթողիկոսը էր 90 տարեկան։ Կաթողիկոսի մահի ծանուցման մէջ, որ պաված էր «Կառաջ» (Կովկաս) լրադրի մէջ 1857 թ. № 13, և վերատպված բոլոր պարբերական հրատարակութիւնների մէջ, առվածէ, որ նա մեռաւ իր կեանքի 96-դ տարու մէջ, ուրեմն նորա ծնունդի տարին պէտք է համարվի 1760 թւականը։

կան եկեղեցու պատմութեան մէջ — և կոչվումէր Ներսէս Ակամ Աշտարակեցի:

Ներսէսի կեանքի առաջին տարիների մասին յայտնի է միայն, որ մինչև ուժ տարեկանհասակը նա գտնվումէր ծնողական տան մէջ, յետոյ կրթվել է Էջմիածնում իւր կնքահօր Էջմիածնեան աթոռի արքեպիսկոպոս Գալուստի պաշտամութեան և խնամատարութեան ներքո (1): Պատմվումէ, որպէս թէ այս ծերունին, որ դաստիարակումէր Ներսէսին մանկութեան ժամանակում, փոխելէր մանուկի անունը և, մի գաղտնի ներջնչութեամբ, կոչելէր նորան Ներսէս, ասելով, որ և աս, լինելով Աշտարակից, լինելու է մեծ շնորհ: Նկատելով պատահու մէջ գեղեցիկ ընդունակութիւններ և իրբնախագուշակելով նորան յետոյ աստուածաբանական ուսումը կատարելու համար Կոստանդինոպոլսի պատրիարքին — Գրիգորին, որ հռչակածէր ուսումնականութեամբ և առաքինութեամբ: Այնտեղ անցկացրեց պատանին երկը տարի և, Էջմիածին վերադառնալուց յետոյ, քսան տարեկան հասակում, վճռեց նվիրել իւրան Եկեղեցու ծառայութեան և, ընդունելով հօգևորական կարգը՝ նշանակվեցաւ Նախաթռոս Էջմիածնեան Վանքի աւագ սարգաւագ:

Արքեպիսկոպոս Գալուստի մահից յետոյ, որին Ներսէսը կուչումէր իւր երկրորդ հայր նա գտաւ իւրան համար նոր պաշտպան Ղուկաս Կաթողիկոսին, որ բարձրացաւ այն ժամանակ Էջմիածնեան աթոռի վերա : Կաթողիկոսը ուղարկեց նորան Զմիւռնա և այնտեղից Կոստանդինոպոլիս:

Անրադառնալով դէպի Հայաստանը, անցած դարի վերջին տարիների մէջ, Ներսէսը գտաւ Կաթողիկոսին վերջին շունչին: Ղուկասի և Յովսէփի մահից յետոյ — վերջինս էր Արդութեան իշխանների տունից և նշանակվածէր Պետերբուրգում — բարձրացան աղմուկներ երկու Կաթողիկոս-

(1) Ներքին Գործերի Նախարարութեան օրագիր, 1843, № 9, 372: «Նկարագրական ուսուական Մատենադարան» օրագրի զօրութեամբ (1857, № 20,) Գալուստը Ներսէսի պատ էր:

ների հակառակութենից : Կ. պօլի Դանիէլը ընտրվածէր աղջի ձայնով, իսկ Թիֆլիսեցի Դաւթին ուժով նշանակելէր Երևանի Սարդարը : Ներսէսը, որի սրտի մէջ շնորհէր իւր բնակարան արդար և սուրբ աղջակարութիւնը, հակառակեցաւ սաստկութեամբ Դաւթի գործին և ենթարկվեցաւ հալածանքին և միքանի ժամանակ նաև բանտարկված էր Դանիէլի հետ միասին :

**Ա**զքեպիսկոպոս Եփրեմը, ապառնի Կաթողիկոսը, ազատեց նորան հալածանքներից, դուրս բերելով նորան Ռուսաստանը : Բայց երբ իջեցրվածէր Դաւթիթը և հայկական աթոռի վերահաստվեցաւ Դանիէլը, Ներսէսը վերադարձաւ Էջմիածին :

**Ա**ռո Կաթողիկոսը, որ ճանաչեց արժանավէս տարիներով միայն երիտասարդի, իսկ խելքով և կամքով հասուն այրմարդի պայծառ ձիքը, արժանացրեց նորան աբեղալի կարգին և նորանից յետոյ շնորհեց նորան եպիսկոպոսի աստիճան : Մինչեւ այս ժամանակ Ներսէսի գործունէութիւնը սահմանափակված էր Էջմիածնի պատերի մէջ, պարապելով եկեղեցական պաշտամունքով : Շուտով բացվեցաւ նորա առաջ առաւել ընդարձակ ասպարէզը :

1802 թւականին, նա ուղարկվեցաւ կաթողիկոսի կողմից իւր դաստիարակի, Նախկին պատրիարք Գրիգորի հետ դէպի Վրաստան; այսուղ պատերազմի բոլոր ժամանակին, որ բացվեցաւ շուտով Պարսկաստանի և Ռուսիաի մէջ, Ներսէսը ճշմարիտ հերոսին արժանի քաջազնութեամբ և ինքնազոհութեամբ խնամարկումէր իւր ժողովուրդը :

**Պ**ատերազմ վերջացաւ և Ներսէսը վերադարձաւ Էջմիածին և սկսեց ամենայն ջերմեռանդութեամբ օգնել Կաթողիկոսին, դառնալով նորա աշխատակից խափանված գործերի վերականգնման մէջ : Դանիէլը բարձրացրեց Ներսէսին արքեպիսկոպոսութեան աստիճան, և յետոյ ուղարկեց նորան յանձնարարութիւններով Թիւրքիաի զանազան քաղաքներ և երկրորդ անգամ Կոստանդինոպոլիս, վեպերի և Սուլուանի մօտ, որտեղից Ներսէսը վերադարձաւ կատարեալ յաջողութեամբ և բերեց Կաթողիկոսին Սուլուանի ողորմած Գիրմանը :

**Ե**րբ 1809 թւականին բացվեցաւ Ռուսիաի և Թիւրքիաի մէջ պատերազմ, Ներսէսը, որ այդ ժամանակում—առաջ Կա-

թողեկոսի բացակայութեան պատճառով; որ հեռացելէր Եղեւան և յետոյ Դանիէլի մահի պատճառով — կառավարումէր մայր աթոռի վանքը՝ պատերազմի բոլոր միջոցում վանքի շըրկայքում, ցոյց տվեց իւր մեծ ջերմեռանդութեան ապացոյցներ գէպի Ռուսաստանը և աներկիւլ հաւատարմութիւն իւր ազգի ծամարիտ օդուաներին:

Ակամա ծնվումէ Հարցը. Ինչ կերպով, գանվելով անդադար Պարսիկների և Թուրքերի մէջ, ոչ միայն ազատ էր նոցա վրէժից իւր հաւատարմութեան համար դէպի Ռուսեր, բայց և Միւս սիւլմանները համարձակ հաւատումէին նորան խրեանց լոր հուրդներ։ Երբ այս հարցը արեց Ներսէսին ռուս Ճանապարհորդը Ա. Մուրավիեվը, որ իւր Ճանապարհորդութիւն ստորագրեց «Գրչիա և Արմենիա» (Վրաստան և Հայաստան) անունով երեքհատորեան մատեանի մէջ, որ տպիեցաւ 1858 թւականին և որի երկրորդ հատորը հեղինակը Ավետիք Հայաստանի և Հայերի ստորագրութեան, որտեղ նա հաղորդումէ քանի մի տեղեկութիւններ և Ներսէսի մասին, Ներսէսը պատասխանեց Մուրավիեվին. «Եոքա հաւատումէին իմ խօսքին, որովհետեւ Ասիացիների մէջ առաջին առաքինութիւնն է—տվյած խոստման հաստատ կատարումը։ Բացի սորանից Պարսիկները միշտ պատելին էջմիածնեան վանքը, իսկ դէպի ինձ Աբբաս Միրզան ունէր առանձին յարգանք՝ և սէր։ Կա երկու անդամ այց է արել վանքը, իմ կառավարութեան ժամանակում և միշտ ցոյց է տվել վառաբանութիւն դէպի նոր։ Նա հաւանեց Աստուածածնի երկու պատկերներ, որոնց բերելէր Սիմեօն կաթողիկոսը Պարսկաստանից, և նա կամենումէր առնել նոցա իւրան հետ, բայց ևս ասացին որ չէ կարելի թողնել բեմը առանց զարդի և Աբբաս Միրզան բաւականացաւ միով, որ պահումէր իւրան մօտ մէծ պատուվ։ Իսկ երբ, կաթողիկոս Դանիէլի մահից յետոյ, և մեղանից ընտրված Եփրեմի բայցակայութեամբ, Դաւիթիթը, Նախկին պատրիարքը, նորոգից դարձնաւ գործութիւններ, և ինձ կանչեցին պարսկական բանակը, Խորվիրապի մօտ, ես համարձակ սկսեցի նորա ընդդէմ խօսել Աբբաս Միրզաի առաջ։ Դաւիթի կողմանալահներ են Երեւանի Սովորաբը և եօթ խաներ, բայց ես կանդնեցի նոցա մէջ և

հարցյրի պարսկական թագաւորին. Ինչ մասնակցութիւն կարողին ունենալ խաները, նոցա օտար հաւատի պատրիարքի ընտրութեան մէջ? Միթէ կամենումն նոքա ինքեանկ ընդունել այդ հաւատը? Արդարութիւն է միթէ նոցա կողմից խառնվել մեր այնպիսի սուրբ գործի մէջ, առաւել ևս, որ մենք ունինք օրինաւոր կաթողիկոս? Եթէ խաներից մին, կամ ինքն Դասիթը ունի ինչ իմ ընդդէմ, թող այժմ իսկ մեղադրէ ինձ դէմառդէմ, —և նոցանից ոչ ոք չբացեց շրթունքը իմ ընդդէմ: Այն ժամանակ Աբբաս Միրզան ոչ միայն ընդունեց ինձ բարեհաճութեամբ, բայց իմ՝ խնդրով մնաց երկու եօթնեակ (շաբաթ) Խորվիրապ վանքի մօտ ազասելու նոր կաթողիկոս Եփրեմի գալուստը, որ գալիս էր Ռուսաստանից (1):»

Այս հանձարեղ խօսքերը կարդալով, ամեն չայն մտածելուե, թէ որքան զանազանութիւն կայ համարձակ և երբեմն ազգային գործի մէջ — յանդուդն Ներսէսի և ուրիշ հոգեորական անձների մէջ, թէև սոքա լինէին եսլիսկոպոսներ և արքեր: Որքան ցածանումէ դոցա ողին Ներսէսի անվաստակ, աներիկիւդ, ազնիւ հոգու առաջ! Այս, այսպիսի մարդիկ ունին ուրիշ զբգոռող զգացում, ուրիշ միսիթարող լնկեր — հանձար: Ի հարկէ այսօրեան հոգելու բականներ կարողեն սարսափել Ներսէսի յիշված վսկը խօսքերը լսելով: Ամեն բանական մարդին անարժան էր vitam, veluti pecora silentio transire: Մեր հայրերը ցանկանումեն որպէս թէ ժողովուրդի սէրը ժառանգել, մօռանալով: որ ժողովուրդի ողին չէ կարող երբէք հաշտվել կեղծաւորի հետ: Այդպէս մոլորփած ները հրաւիրվումեն ճշդութեամբ ուսումնասիրել անմօռաց Ներսէսի կեանքը և իմանալ — ինչովնա ժառանգեց ամբողջ հայկական ազգի սէրը գեռ արեղա դոլով: Զէ, ժողովուրդը անկեղծութիւն է սիրում, ինչպէս ինքն է կատարելապէս անկեղծ կազմված: Հեռանալով ազգային գործերից «խոռովութիւններ» անուն գնելով դոցա, գժվարէ, մանաւանդ անկարելի, ստանալ «բարի» անունը պատրիւը կամ սէրը: Ճողովուրդը կարօտելով խնդրումէ, պահանջումէ հոգատարութիւն, եթէ սա կապված լինէր և հոգատարի անձնական վտանգի հետ, — որի մասին փոքր է մտա-

**Ճում՝ ժողովուրդը,** բայց պէտք է մոքում ունենալ և այս, որ հոգածարութեան փոխարէն ժողովուրդը անշուշտ պատկումէ իւր անձնանվէր հոգատարին մշտառն պատռով և սէրով : Բայց դառնանք դէպի մեր ընդհատված խօսքը :

**Կաթողիկոս Եփրեմը** թոյլ բնաւորութեան տէր էր: Ներս սէսը շուտով տեսաւ, որ չարամիտ մարդիկ մկնեցին ազդեցութիւն ունենալ, և որ նորան ինքնին սպառնումէր վտանգ կեանքից զբկվելու դաշտնի ձեռնարկութեամբ, և այս պատճառով նա խնդրեց թոյլավութիւն հեռանալու նորէնդէպի Վրաստան և 1811 թւականին (1) նշանակվեցաւ Վրաստանի եկեղեցիների վիճակաւոր արքեպիսկոպոս :

**Սորանից յետոյ Ներսէսը** ստացաւ ողորմածագոյն պարգև — գոհարեղէն խաչ վեղարի վերա բարձրագոյն հրովարտակի հետ 1812 թւականին յունվարի 9-ից (2):

**Այստեղ** բացվեցաւ Ներսէսի գործունէութեան համար նոր առաւել ընդարձակ ասպարէզ: Ունենալով իւր մշտական բնակութիւն Թիֆլիսի մէջ, Ներսէսը դարձրեց իւր բոլոր զօշութիւններ և աշխատութիւն դէպի յանձնված հօտի բարձրին և ներգործումէր ոչմիայն որպէս հոգեոր հօվիւ, բայց և որպէս իւր ազգակիցների բարեկամ և բարերար: Կազմելով Թիֆլիսում և ընդհանրապէս Վրաստանում բնակութեան նշանաւոր մասը, Հայերը այդ միջոցին այնքան փոքր ժամանակից էին ազատվել Միւսիւլմանների լուծից, որ թշվառու-

(1) «Եկրքին գործերի նախարարութեան օրագրի» գօրութեամբ այս նպաւ 1814 թւականին: Բայց քանի մի ուրիշ տեղեկութիւնների համեմատ, Ներսէսը նշանակվեցաւ Թիֆլիսի Առաջնորդ — ինչպէս ցոյց է տվված վերև — 1811 թւին: Մենք ընդունումնենք վերջինս այնոր համար, որ Ալեքսանդր I կայսրի բարձրագոյն հրովարտակի մէջ, յունվարի 8-ից 1812 թւականին, որի մասին խօսք կ'լինի ներքեն, Ներսէսը կոչվածէ «Վրաստանում բնակվող Հայերի վիճակաւոր Առաջնորդ»:

(2) Այս հրովարտակը միշտումէ «Собрание актовъ и обозрение истории Армянского народа» (գործերի հաւաքում և հայկական ազդի պատմութեան տեսութիւն) գրվածի մէջ մ. Ի եր. 50: Բայց այս հրովարտակը 1812 թւականի չէ՝ գտնվում ոչ Սենատի և ոչ Ս. Պետերբուրդի լրադիրների մէջ:

թիւնների նշանները, որոնք ծանրանումէին հեռու ժամանականերից այս խելացի և աշխատասէր ժողովուրդի վերա, մնումէին դեռ բազմութեամբ անջնջելի: Հայերը, ինչպէս վրաստանի և ուրիշքնակիչներ, ոչմիայն աւերվածէին, բայց շատերը հասցրվածէին աղքատութեան, և ընկած խորին տղիտութեան մէջ:

Այքեապիսկոպոսը, ոգեւորված քրիստոնէական և հովական ջերմեռանդութեամբ դէպի իւր հայրենակիցների բարելաւութիւնը, բոլորից առաջ գործ դրեց իւր աշխատութիւն հոգեորականութեան կարգաւորութեան և լուսաւորութեան համար: Անմուաց Ներսէսի գրեթէ ամեն քայլի մէջ մենք յայտնապէս տեսնումենք, թէ հանդուցածը ինչ հանձարեղ և խորին կերպով հասկանումէր շրջապատող հանգամանքներ: Նա հասկացելէր, որ թշվառ պէտք է լինի այն ազգի մտաւորական և մանաւանդ կրօնական կեանքը, որի հոգեւորականութիւնը յետ կ'մնայ ժողովուրդի միւս դասերից լուսաւորութեան մէջ: Նա քաջ հասկացելէր, որ այս դրութեան հետեւանք պէտքէ անշուշտ լինի կրօնական հաւատալիքների նվազումը ազգի մէջ, մանաւանդ ազգի լուսաւորված մասի մէջ, երբ վերջնա կ'տեսնէ, որ հոգեւորականութիւնը չէ համեմատվում նորան ոչ մտաւորապէս (իմացականապէս), ոչ բարոյապէս և ոչ նիւթապէս: Այսեղ ընդհատվումէ ամենայն հազորգակցութիւնը հոգեւորական անձի և նորա հօտի անդամի մէջ և ուրինն քանդվումէ աստիճանաբար կապը աշխարհական անդամն և այն սուրբ և աստուածային խորհուրդի մէջ, որտեղ հոգեւորական անձը հանդիսանումէ որպէս պաշտօնական միջնորդ, որպէս փորձառու հաշտարար: Ահա լուծծումը այն վերին իրաւունքի, որով պասկված է քահանա: «Իշխանութեամբ, որ տվաւ ինձ յերկնից, արձակեմ զկապեալս»: Եթէ այդ իրաւապսակ պաշտօնեան ունի արդարեւ այնպիսի արտօնութիւններ, որոնցով պէտքէ իրաւացի արժան համարվէր աշխարհական անդամի՝ կողմից այդ աստուածային իրաւունքին, այնպիսի բարձր արժանաւորութիւններ, որոնցից զըկված պէտքէ համարէր իւրան աշխարհականը, այդ ժամանակ նախանձելի են դոցա խաղաղ հաղորդակցութիւնները; իսկ եթէ որդին չէ տեսնում իւր հօր մէջ, ոչ միայն այս, որ

միայն կարողէք ծնեցնել նոյս մէջ որդի—հայրութիւն, բայց և միքանի կողմերով հայրը անհաւասար է տեսնվում որդու հետ սորա առաքինութիւնների մէջ, չէ որ այդպիսի պաշտօնեան խմաստուն մարդի առաջ համարվելու է անշուշտ անարժան ինքնակոչ և . . . . . Երանի, հազար երանի այն ժողովուրդին, որի հոգեւորները պատրաստված են ժողովուրդի բոլոր պատիւր և սէրը ժառանգելու; փառք այն քահանաբին, որ այս հիմներով պատրաստվել է կառավարել իւր հօար; Այս գիւղվածներում ըսնի տեղ թերահաւատութիւնը ժողովուրդի մէջ, մանաւանդ անհաւատութիւնը; Բայց մենք հեռացանք մեր գործից, փոխանակ առելու, թէ մենք բոլորովին մոտեցանք մեր գործին: Դէպի վերջին խնդիրս մենք կ'աշխատենք վերադառնալ ուրիշ անգամ; այժմ այսքան կ'ասենք, որ հայկական ազգի մեծ քահանան, անմառաց Ներսէսը, քաջ և խորին կերպով հասկացելէր հոգեւորականութեան այս խորհուրդը և նորա առաջադիմութեան կամ ազգեցութեան տեղութեան պայմաններ և այսոր համար նորա առաջին ուշը գարձրեց իւր վերա այդ գործի դրութիւնը:

**Ս**ախ նա ազատեց հայկական եկեղեցին այն չարութիւններից, որոնք մասելէին այնտեղ. կարգեց խիստ վերահասութիւն եկեղեցական եկամուտների վերա և յետոյ սկսեց մտածել, թէ ինչ հնարներով պիտի բարւոքացնէր բոլը Հայութի և մանաւանդ հոգեւորականների բարոյական գրութիւնը:

**Ե**կեղեցական ստացվածների խելացի կարգաւորութեամբ սկիլվը զրովցաւ այն գումարի հաւաքման, որ պիտի գործածվէր տաճարի շինութեան և ուսումնաբանների հիմնարկութեան համար: Մեր կառավարութեան թոյցտվութեամբ Ներսէսին հաւատացող, առատաձեռն հայասէրների խնդիրակամ օգնութիւններից և ընծաններից շուտով կազմվեցան նշանաւոր գումարներ: Ներսէսը որպէս հաստրակ խնդրագործ հրաւիրումէր ամենեցուն ամեն կողմից օգնելու ընդհանուր ազգային շինութեան; Նա քաջ դիտէր, որ քանի աւելի անէ նա հրաւիրներ և առաջարկութիւններ, այնքան աւելի պիտի պատեին և սիրէին նորան Հայերը; որովհետեւ այդ նորա գործի մէջ տեսնումէին նորա անգարար հոգացողութեան նշաններ ազգային գործերի մասին

Այն ժամանակ հանդուցած փառաւոր քահանան, աղօգոտուտ ձեռնարկութեան բարձր ոգով լցված, կարողացաւ ձեռնամուլս լինել իւր բազմավաստակ քաջազործութեան: Չխնայելով և իւր ունեցածը, անմոռաց արքեսպիսկոպոսը 1819 թւին սկսեց շինել Թիֆլիսում ընդարձակ, թանկագին, այն ժամանակում շատ նշանաւոր և հռչակաւոր կառուցումը հայկական ուսումնարաննի համար այն հողի վերասոր պատկանումէր տեղական հայկական վանքին: 1823 թւին շինութիւնների մեծ մասը արդէն վերջացածէր: Նոյն տարում քաջ բացվեցաւ ուսումնարանը, և սկսվեցաւ ուսումը; սոքա էին ուսանելի առարկաներ: Հայկական լեզու և դրականութիւն, ուսուսական լեզու, պատմութիւնն և աշխարհագրութիւն հայկական, ուսուսական և բնդհանուր, մատեմատիկա և կրօնագիտութիւն:

Աերսէսը ցանկանումէր տալ միւնոյն ուսում հայկական հոգևորականներին և աշխարհականներին, որ գնալով զարգանալով միասին; Հաստատ լինէր նոցա մէջ հաւաքմութիւնը դէպի միմեանց: Ի հարկէ այս հասկանումէր միայն անմոռաց Ներսէսը, որ իւր բազմահայեաց իմաստութեամբ այն կարողէր հաւաքմարվել ամենայն եւրոպական քաղաքադէտին: Նա քաջ հասկանումէր — և ինչ որ հասկանումէր այն և կատարումէր, առանց ումենայն ակնկալութեան . . . . .

Ներսէսը քաջ հասկանումէր, որ աղքային գործերը ։ այնպէս ինչպէս կան, կարողէն միայն առաջ գնալ եկեղեցու հովանաւորութեան աակ և մենք բոլորովին համաձայն հնք հանգույցածի խօսքերին և իմաստնաբար ուշադիր լինելով գործին, կարելի է այսօր կրկնել իմաստասէրի խօսքը «hors de l'église point de salut»—եկեղեցուց գուրս չկայ փրկութիւն—վերաբերելով այս խօսքը դէպի Հայերի այսօրեան զբութիւնը։ Հայերի անմոռանսլի կաթողիկոսը հասկանումէր այս, և ներդրուծումէր ։ ։ ։ Ուսումնաբանը կոչվեցաւ մեծ հիմնարկողի անունով՝ «Ներսէսիսան Աւսումնաբան»։ Ներսէսը իւր սեփական ծախսով հրաւիրեց գալ Փարիսից յայտնի հայկաբան Շահան—Զըր-

պետեանին, որի գալուստը նստեցաւ կաթողիկոսին մօտ 6000  
մանէթ (1): Շուտով ուսանելի զիտութիւնների կարգ մտան  
եկեղեցական պատմութիւնը և աստուածաբանութիւնը : Բայց  
արքեպիսկոպոսը չէր կամենում սահմանաւորել իւր ուսումնարանը հոգեւորական դպրոցի եղական նպատակով, սակայն  
բաժանեց նորան երկու բաժանմունք, որոցից մին կազմումէր դպրոց seminaire — միւսը գառնումէր դիմնաղիօն, այսական առաջինը պիտի պատրաստէր Հայկական երիտասարդներին հոգեւորական կարգը արքանապէս ընդունելու համար, իսկ երկրորդը պիտի պատրաստէր ազգի համար ազնիւ և իմաստուն քաղաքացիներ, Հայերի աշխարհական ազգային գործերի հոգաւորձութիւնը և տէրութեան ծառ այսութիւնը կատարելու : Բայց և սորանով չէր բաւականանում Ներսէսը. նա կամենումէր ներս բերել վերին գիտութիւնների գասատվութիւն և այնպէս սկիզբ դնել Հայկական Ակադիմիաի հիմնադրութեանը Այս նպատակով ահա նա կարգեց ուսումնարանի մէջ Հայկական տպարանն, որ կայ մինչեւ այսօր (??):

Այս շատ հետու էին նայում Ներսէսի մտքերը և ցանկութիւնները այն ժամանակում: Ո՛չ ոք կարող չէ ուրանալ, որ Ներսէսը ունէր այս բարձր ցանկութիւններ և սկսելէր, կարելութեան չափ, գլուխ բերել; Եթէ մենք ուրանալու լինէինք, երկիրը կ'վկայէր, ինչպէս վեղեցիկ տաց այս օրերում մեր բարեկամներից մին: Միայն ոչ հետատես մարդը (1), որ չէ ցանկանում մոտածել, թէ որեւիցէ ձեռնարկութիւնը ինչ զարհութելի արդելական ապառաժներին և սարերին է հանդիպում և, զարկը լինումէ երբեմն այնպիսի խիստ և սասաիկ, որ բոլորով մին ջախջախվումէ գործը, միայն այսպիսի մարդը կարողէր

(1) Քանի մի Հայեր, կիրքերից շարժված, անարդարութեամբ են մեկնել երբեմն Ներսէսի ցանկութիւններ և մտքեր, բայց հաւատացած ենք ամենեցուն կարծիքները այս մեծ Հայի մասին ամիսվելու են այն երախտագէտ պրտերի արձանի տակ, որ պիտի կանգնվի պ. Ներմազանեանի ձեռնարկութեամբ: Իդէպ (ձ. propos): Մոռացելէինք ասել, որ պ. Ներմազանեանը նախապէս պիտի թոյլտվութիւն ինդրէ իւր ձեռնարկութեան համար մեր կառավարութենից :

արտաքերել Ներսէսի անունը առանց փառաբանութեան: Բայց  
սորա մասին ժամանակով . . . .

Այս կերպով շինվեցաւ գիտութիւնների տաճարը, ան-  
օրինակ տաճարը բոլոր հեռաւոր Վրաստանի մէջ: Աշակերտ-  
ների թիւը շուտով հասաւ մինչև 400: Բայց Ներսէսը ցանկա-  
նումէր աշակերտների թիւը մեծացնել մինչև 800:

Թիւպէտ հաւաքված գումարը բաւականէր երևում սկըզ-  
բում ուսումնարանը շինելու համար, սակայն յետոյ շինուա-  
թեան մեծանալուն հետ, նոյնպէս պիտոյքների բաղմանալուն  
հետ, այն գումարը երևեցաւ անբաւական բոլոր ծախսերը ծած-  
կելու համար: Այս պատճառով Ներսէսը չինայելով ոչ աշխա-  
տութիւն, ոչ ծախս, բոլորը ինչ ունէր և կարողէր—զոհեց  
իւրանից հասարակական օգտի համար: Ինչու պատմումնն,  
Ներսէսը շատ ուրախ էր, որ հայկական ուսումնարանը նա-  
կարողացաւ հիմնել Ռուսաստանում: Այդ ժամանակում ան-  
գլխական միսիօներներ (քարոզիչներ), որոնք գտնվումէին  
Հնդկաստանում, առաջարկումէին Ներսէսին միաւորվել նոցա-  
հետ և հիմնել հայկական ուսումնարաններ, որոնք կարողէին ըն-  
դունվել Անգլիաի և Հիւսիս—ամերիկակական Շտատների հո-  
վանաւորութեան տակ և այնով բոլոր հայկական ազգը մըտ-  
ցնել յիշված տէրութիւնների պաշտպանութեան տակ: «Բայց  
ես չկամեցայ այս—ասումէր Ներսէսը — ես վախենումէի իմ  
եկեղեցու համար և փրկութիւնը կարողէի գտնել միայն Ռուս-  
սաստանի հետ միաւորութեամբ» (1):

Բացի կրօնական, բարոյական և մտաւորական լուսաւո-  
րութիւնից, իմաստուն առաջնորդը, որ նվերված էր բոլորու-  
մին իւր ազգի հասարակական կեանքին, չէր թողնում անու-  
շաղիք կեանքի և ուրիշ կողմեր: Գիտենալով, որ հասարա-  
կական կեանքի և լուսաւորութեան համար անշուշտ հարկա-  
ւորէ գործունեութիւնը և որ նորա սիրել ժողովուրդը, Հա-  
յերը, մանաւանով սիրումէին վաճառականութիւն, անձնադիր  
Արքեպիսկոպոսը շնորհ թիֆլիսում 1819 թւին կուրի ձախ

(1) Այս վերջին տեղեկութիւնները մենք գտնում ենք բարօն Հակո-  
բառզէնի Շմեզրկալիանան աշխարհա գրքի մէջ, մ. 11, եր + II—12:

ափին ընդարձակ, քարեա քարվանսերա : Այս անվաստակ հովիւր, որ քննումէր և հարցասիրումէր ազգային կեանքի ամեն մանրամասեր, որ ցանկանումէր լինել բոլորովին Հայր իւր որդիներին—և որ ազնիւ Հայն որդիաբար գիմելով դէպի անմռռուանալին, չէ լսել նորանից իսկապէս հայրական խորհուրդը, անկեղծ սրտի խօսքը, կարևի օդնութիւնը և չէ դուրս եկել Հօր տունից մխիթարված, որովհետև մխիթարվելու գնացելէր Հօր մօտ?—շնուց ապակեղէնի գործարանը Թիֆլիսի մօտ :

Շուտով նոր յեղափոխութիւններ քաշեցին անմռռացին դէպի ուրիշ գործունէութիւն : 1820 թւին, Եփրեմ կաթողիկոսը, պարսկական տէրութեան հետ պատահած տարածայնութիւնների պատճառով, հարկադրվածէր թողնել եջմիածին և հեռացաւ դէպի Ռուսաստանի սահմաններ : Այն միաջոցին ներսէսը սկսեց առժամանակ կառավարել բոլոր Հայկական Եկեղեցին կաթողիկոսի անունով և կառավարումը շարունակվումէր մինչեւ կ'վերջաննար պատերազմը Ռուսիաի և Պարսկաստանի մէջ : Այդ ժամանակին ներսէսը ցոյց տվեց իւր հրանարագիտութիւնը, քաղաքականութեան հասկանալը, որով հետեւ կառավարումէր մեծ իւր հրանարագիտութիւնը (Voyage dans la Russie meridionale, par le chevalier Gamba, Paris, 1826. T. II. pag. 157). «Մեծամեծ գործերի հիմնարկողների մէջ, չկայ ոչ ոք, որ առաւել նշանաւոր լինէր քան ներսէսը, հայկական Արքեպիսկոպոսը Թիֆլիսում»:

Յայսնի ճանապարհորդը, անպեստ Գամբան, 1824 թւին գտաւ Ներսէսին Թիֆլիսում մեծամեծ գործերով, աշխատութիւններով և առաւել ընդարձակ առաջարկութիւններով զբաղված, որոնց մէջ նա գուշակեց բոլոր կովկասեան աշխարհների համար փառաւոր առափախ արշալոյսը : Նա ասումէ այսոր մասին իւր ճանապարհորդութեան մէջ միջօրեա Ռուսաստանում՝ հետևեալը (Voyage dans la Russie meridionale, par le chevalier Gamba, Paris, 1826. T. II. pag. 157). «Մեծամեծ գործերի հիմնարկողների մէջ, չկայ ոչ ոք, որ առաւել նշանաւոր լինէր քան ներսէսը, հայկական Արքեպիսկոպոսը Թիֆլիսում»:

Այս հուշակաւոր Հովիւր շնուրէ ավել քաղաքի մէջ ընդարձակ քարվանսերա, որ կարծես գուշակումէ այս քաղաքի առևտրական մեծութիւնը : Կա շնուրէ նոյնպէս ուսումնարան, որի մէջ նա մտածումէ ունենալ եւրոպական և ասիական գլխաւոր լեզուների ուսուցիչներ, իւր հայրենակեցներին

տալու այնպիսի ուսումը՝ որից մինչև այժմ նոքա ընդհանուրագէս զբկվածեն եղել : . . . . .  
 . . . **Մի** առանձին բազդով այս հեռաւոր տեղերը լուսաւորելու հոգու յանձնվածէր երկու արժանաւոր անձներին, որոնք նոյնպէս զարդարվածէին բարի և համբերող բնաւորութեամբ; և այս յատկութիւնները կարողեն հաւասարի վկայութիւն լինել նոցա փառաւոր գործի յաջողութեան; Մին, Աբբա Նիկոլը . . . . Միւսը (յարգելի Ներսէսը), տեսնելով ազգը, որ մի օր մեծ և յարգվածէր, այսօր կախման տակ, ցրված և թուլացած, ոչ միայն որպէս արքեպիսկոպոս, սակայն և որպէս մի ժողովուրդի գլուխ, նա մտածեց, որ հարկաւորէ միաւորել կրօնական ուսումը աշխարհականի հետ և գուցէ հանձարի աչքը ճգելով ապագաի վերա և յուսալով որ Աստուած ձեռից թողնելու չէ միշտ հին նահապետների սերունդները, նա կամեցաւ գոնէ պատրաստել նոցա սկզբից դառնալու միանդամայն առաքինի և լուսաւորված մարդիկ, որ կարողանան Ռուսաստանի կայսրի արժանաւոր հպատակներ համարվել ։

**Ա.**յս բազմամեա և բազմաշխատ գործունէութեան մէջ, Ներսէսը ստացաւ կայսրի ողորմածագոյն ուշադրութեան և բարեհաջութեան նշաններ: Կայսր Ալեքսանդր I, բայց մետքազօլետական Խաչեց վեղարի վերա—որիմասին ասացինք—պարգեց Ներսէսին, 15 յունիսի 1819 թւին Աննաի առաջին աստիճանի պատւանշամնը: յայննելով—ինչպէս ասվածէ բարձրագոյն հրովարտակի մէջ—առանձին կայսերական ուշադրութիւն նորա (Ներսէսի) գերազանց հոգաբարձութեան համար ժողովուրդի վերա և ջերմեռանդութեան համար դէպի Հայրենիքի շահեր: Ա. Պ. Երմօլովը—այնժամանակ տեղիս կառավարիչը կերպով այս հրովարտակը և պատւանշամնը—իւր յարաբերութեան մէջ յուլիսի 19-ից, գրումէր, Ներսէսին: արդար և ողորմած թագաւոր կայսրը յայտնումէ սուրանով գերազանց պատիւ Զեր Արքագնութեան արժանաւոր գործերիդ և հայրենական շահերի վերա ունեցած ջերմեռանդութեանդ համար: Հոգու ուրախութեամբ շնորհաւորումեմես Զեր, Արքագնագոյն Հովապետութեամբ Ամենաբարձրից, որ

օգնական լինի զեղ Զեր օգտաւէտ ծառայութեան մէջ Մեծ  
թագաւորին հնաղանդվող աշխարհներում »:

Բացի սորանից Ալէքսանդր Կայսրը պարզելէր Ներսէսին  
Ճոխ պանագէներ իւր հրովարտակներով :

Այստեղ վերջացնումէնք մեր խօսքը այս անգամի համար :  
Թէ ինչ պատահեցաւ 1826 թւականից յետոյ անմոռաց Ներսէսինքի կեանքի մէջ, մեր իմացածը կ'առաջարկենք ընթերցողներին միւս անգամ : Այստեղ կը կնումէնք մեր խնդիրը դէպի ազնիւ Հայերը: ուղարկել մեզ ամենայն ճեռում եղած տեղեկութիւններ Ներսէսի մասին; մենք ուրախութեամբ կ'ընդունենք ամեն տեղեկութիւնն, մինչև և մանր անեկդօսներ նորա կեանքից: լեզուի մասին խնդրումնենք անհոգ լինել. մենք ընդունելու ենք տեղեկութիւններ ամեն լեզով և ինքներս կ'աշխատենք թարգմանել (1):

Ա. Ա:

(1) Հարկաւոր ենք համարում ծանուցանել մեր ընթերցողներին, որ այս մեր յօդքածը սրատաստվեցաւ արդէն անցած տարու յուլիս ամիսին, Օրագրիս առաջին № ի մէջ տալիքու համար, և պիտի հրատարակվէր անցած տարին, բայց մինչև այժմ մնումէր Խմբագրութեանս պօրտֆեով: մէջ; իսկ անմոռանալի Հանդուցածի պատկերը պատրաստելու յանձնութեցաւ պատկերահանին օգոստոսի վերջում: Վերջին ժամանակումն թիժիսի լրացիրը բարցրացրելէր այս մեր հարցը իւր թերթի մէջ, երբ մինք արդէն յանձնելէինք տպարանին մեր յօդվածը շարելու: Մինք խօսելու չունենք և ունենալու չենք երբէք ոչինչ լրագրին հետ, բայց այս անդամ, և միայն այս անդամ, թոյլ ենք տալիս մեզ լինել նորա անունը: Եթէ լրագրին Խմբագրութիւնը յայտնած լինէր մեզ իւր միտքը այս գործի մասին, ինչպէս մինք յայտնելէինք նորան մեր դիտաւորութիւնը և գործը վազուց, մինք թոյլ տալուէինք նորան ասպարէզը և մկտեսնէինք ինչպէս պիտի կատարէր նա մեր միտքը: Մինք դժվարանալու չենք երբէք գտնել հայկական կիհանքի մէջ արժանաւոր խնդիրներ բարձրացնելու և քննելու, և մեր օրագրի Խմբագրութիւնը ներելու չէ իւրան երբէք ոչինչ մուրացկանութիւն, ոչինչ աւելորդ հոգաբարձութիւն:

Խմբագր:

ԱՌԱՋԻՆ ՕՐԻ ԱՌԱՋԻՆ ՊԱՅՈՒՄ (1): (ԽԹԱԼԵՐՔԻՒՄ):

## ՈՐԻՎԵՍ ՍՈւՐԲ ԸՆԴՈւՆՎԱծ անառակը:

Մի ժամանակ Ֆրանսիաի մէջ կար մին Ֆրանսուս Միւսիա անունով, որ հարուստ վաճառականից դարձելը պալատական դրան մեծ իշխանութիւն ունաւ առաջայի Տօսկան գնալու կարլոս Անհողի, Ֆրանսիաի թագաւորի եղբօր հետ, որին Քօնիֆաս պատը կոչել էր այնտեղու Նորա արած ծախսերը խառնելէին նորա գործեր, ինչպէս լինումէ շատ յաճախ վաճառականների հետ, և տեսնելով, որ անկարելի կ'լինէր նորան բարեկարգելու այդ գործերը իւր գնալուց առաջ, նա վճռեց յանձնել այդ գործերը շատ մարդկնելին, Մի գործ միայն անհանգստացնումէր նորան, նա դժվարանումէր գոնել մի բանիմաց մարդ, որ վերադարձներ այս փողը, որ պարտականէին նորան բարեմաթիւ բուրգունդներ և նա զիտէր, որ բուրգունդները էին չնամաճայնվողներ, չարխաօններ, խոռվարադներ, զրագարտադներ, առանց պատւի և սրբոթեան, վերջապէս այնպիսի մարդիկ, որ նա զեռ չէր կարողացել դանել այնքան չար մարդ, որ կարողանար նոցա հետ գլուխ տանել, Երկար մոտածելուց յետոյ այս գործի վերա, նորա միտք եկաւ մին Շապուլէ Դիւպրա ահունով, որին նա տեսել էր, երբ նա յաճախ գալիս գնումէր նորա առունը Փարիզում: Այդ մարդի խակական անունը էր Շապուլէ; բայց որովհետև նա կարճահասակ էր, Ֆրանսիայիները կոչեցին նորան Շապուլէ (2), չփառենալով կարելի է այս բառի որիշ տեղ ունեցած նշանակութիւնը.

Այս Շապուլէն այնքան աջողակ մարդ էր, որ լինելով վաճառական միջնորդ (մակլէր), և միշտ սակաւ խնդրված միջնորդ, նա շատ բարկացած կ'լինէր, եթէ որ և իցէ զործ անցնէր նորա ձեռներից առանց սուստ վճռված լինելու, նա այսպիսի զործերը առանել շուտ կ'կատարէր առանց ամենայն վարձի, քան թէ արդար զործերը մեծ վարձու: Եթէ լինումէր սուստ վկաի հարկաւորութիւն, նա միշտ պատրաստէր; շատ անգամ այսպիսի միջոցում նա չ'էր ևս սպասում, որ նորան խնդրէին,

Եւ որովհետև այն ժամանակ Ֆրանսիաի մէջ չափազանց հաւատումէին երդման և որովհետև այս մարդը բուրգովին անհող երդվումէր միշտ, նա տամումէր միշտ զործը, երբ զատաւորը հարկադրված էր լինում հիննվել նորա անկեղծ վկայութեան վերա, Նորա համար մոծ զբարձութիւն էր շփոթ և խառնակութիւն զցել ընաանիքների մէջ և նորա համար չկար առաւել մեծ ուրախութիւն քան տեսնել իւր ընկերի

(1) Նովիլլա, ուուետ, nouvelle.

(2) Այս ձեւը նվազականէ Ֆրանսիայիների մէջ.

շարչարանքը և լինել այնոր պատճառը՝ Եթէ դարձնումէին նորա վերա տշքեր մի վատ զործը կատարելու համար—նա չունէր ոչինչ բացասելու : Արովհնեան նա չափազանց տաք և յանդուզն էր, ամենափոքր ընդդիմակառութիւնը պատճառ էր տալիս նորան Աստվածու և սուրբերի անունը անարգիլու:

Նա ծիծաղումէր աստուածային խօսքերի վերա, արհամարհումէր սուրբ խորհուրդները, երբէք չէր զնում եկտոցի և այցելութիւն էր անում միայն անառակ տեղին: Նա զողութիւն կ'անէր ծածկապէս և յայտնապէս նոյն լինքնահաւանութեամբ և հանգստութեամբ, ինչպէս մի սուրբ մարդ տալիս լինի ողորմութիւն: Որկրամոլութեան և արբեցողութեան վերա նա աւելացրել էր ախտամոլ խաղացողի և խաբեափ պակասութիւններ; այս պատճառով նորա գրպանները միշտ լցված էին խարդախաչն խաղի ուղրներով; մի խօսքով, որ և իցէ ժամանակում ծնվածներից ամենաչար մարզը սա էր: Փոքրները և մեծերը միակերպ հարկադրված էին նորանից գանգատվելու: Եւ եթէ նորա վայրենավթիւնները տանումէին այդողէս երկար, միայն այն պատճառով որ նորան պաշտպանումէր Միւսիան, որ մեծ նշանակութիւն ունէր զրան (պաշտի) առաջ և որի զօրութենից վայինումումէին:

Այս պաշտպականը, մատարեկելով և լրացր Շապալէին, որին բոլորովին ճանաչումէր, լինդունակ զատեց նորան իւր ցանկութիւնները կատարելու և հրամայեց նորան կանչել. «Գու զիսես, ասաց նա նորան, որ ես այս ժամին խալ թողնումն բոլորովին այս երկիրը.—Բուրգունդիներից, այս խարիսքա և անհաւատ մարդիկներից, ստանալիներ ունիմ, և ես ոչոք չեմ ճանաչում քեզանից տուաւել ընդունակ նոցա վըճարել տալու համար: Որպինեան զու շատ պարագաներ չունիս այժմ, եթէ կամինումն ընդունել այս յանձնաբարութիւնը, և կ'առնեմ պալատից պաշտպանութեան թուղթերը, և քո աշխատանքների համար, ես քեզ կ'առմ մի լու մաս այն զումարներից, որ դու կ'վերադարձնես, և Շապալէն, որին նորա խարիսքայութիւնները չէին հարստացրել և այժմ մեղամէր անդորք, տեսնելու որ Միւսիան, նորա միակ պաշտպանը, պիտի շուտ թողնէր ֆրանսիա, վճռեց ընդունել առաջարկութիւնը և պատասխանեց, որ նա ամենայն պատրաստութեամբ յանձնէ առնում զործը: Պայմանները կատեցին: Միւսիան տվեց յետոյ նորան իւր հաւատարմական նամակը և թագուորի նամակներ, որ նա խոստացել էր նորան:

Այն ինչ այս պարոնը ճանապարհ ընկաւ դէպի իսակիա, մեր խարիսքան եկաւ Դիմօն քաղաք, որտեղ նորան ոչոք չէր ճանաչում: Կա սկսեց իւր սովորականի ընդդիմ շատ քաղցրութեամբ և աղնուութեամբ պատմել Միւսիաի պարտապահներին, թէ ինչ պատճառով եկելէ դոցա մօս: Նա բնակիվումէր երկու Ֆլորենսացի եղբացրների մօս, որոնք փոխ

էին տալիս փողը մեծ շահով, որոնք Միւսիսի պատի համար, որ նոյցա առաջարկելէր սորան, չառ քաղաքավարութեամբ կմա վարդութ նորա հետ, Փոքր ինչ ժամանակի իւր դալուց յետոյ Շանգալէն հիւանդացաւ:

Երկու եղբայրները խոկոյն բժիշկ հրաւիրեցին և տովելին նորան ծառայելու համար մի քանի տղաներ, Նոքա ոչինչ չեն խնայում. Նորա առողջութիւնը վերականգնելու համար, բայց այդ ամենը անօգուտ էր Այդ մարդը ծեր էր արդէն; և որովհետեւ նա անցէր կացրել իւր կեանքը ամենաստեակ անառակութեան մէջ, նորա հիւանդութիւնը օր ըստ օրէ վատանումէր: Շուտով քմիչները կարեցին յօյսը նորա առողջանալուց և խօսումէին նորա վերա իրեն մի այնպիսի հիւանդի վերա, որին օգնել անկարելի էր:

Ֆլորմանացինները, հասկանալով իւրեանց զրութիւնը, յայսուումէին իւրեանց անհանգստութիւն. «Ինչ անենք այս մարդին? ասումէին նոքա միմեանց Շապալէի սենեակի մօս սենեակի մէջ, ինչ կ'մտածեն մեր վերա, ևթէ մենք խստութեամբ զուրս զցինք մեղանից մահամերձ հիւանդին, որին այնքան լու ընդունեցինք, որին այնպիսի աշխատութեամբ ծառայելինք և բժշկելինք և որը, այզպիսի զրութեան մէջ, չէ կարող տաէ մեղ ոչ մի կամոնաւոր առիթ նորան արձակելու? Միւս կողմից, մենք պիտի զիսունանք, որ նա այնքան չար էր, որ չի կամոնայ երբէք խստովանվել, ոչ հազարդիլ, և մեռնելով այզպիսի զրութեան մէջ, նա պիտի վայր զցվի պիղծ հոգի վերա ինչորէ մի շուն:

Բայց ևթէ զա խստովանվեր, զորա մեղքերը այնքան բազմաթիւ և զարհուրելի են, որ ոչ մի քանանան չի կամենայ արձակել զորան և գու նոյնպէս զուրկի պիտի մնար քրիստոնէական թաղումից:

Աթէ այսպէս եղաւ, ինչպէս մենք առիթ ունինք կարծելու և վաշ խնալու, այն ժամանակ քաղաքիս ժողովուրդը, որ արդէն նախապաշտամած է մեր ընդդէմ, մեր վաճառականութեան զործերի պատճառութ և որի ընդդէմ չէ դադարում նա հաչել, անկասկած մեղ կմեղանչէ և մեր վերա կ'զնէ այդ մարդի մահը, կ'ասպամամրդի և կ'քանդէ մեր տունը, Այս անիծծած Լոմբարդացիններ, կ'ատեն նոքա, որոնց չենք կամենում ընդունել եկաղեցու մէջ, պէտք չէ որ կոքս այսուեղ մնան այսուեհեան դոքա և կելեն այսուեղ միայն քանդելու մոզ; պէտքէ աքսորել դոյսա քաղաքից, և, չբաւականանալով մեր իրերի յափշտակութեամբ, Ժողովուրդը ընդունակէ անդամ յարձակվելու մեր վերա և զուրս հանելու մեղ առանց այլ և այլ միջոցների վերջապէս եթէ այս մարդը կ'մեռնէ, զորա մահը շատ վտանդաւոր հետևանքներ միայն կարողէ ունենալ մեր համար:»

Պարոն Շապալէն, որը, ինչպէս պատահումէ մեծ մասով հիւանդների մէջ, ունէր նուրբ և սուր լսելիք, բայց չ'թողեց այս խօսակցութեանից ոչ մի բառ, չ'ու կանչել տվյալ, երկու եղբայրներին: «Ես լսեցի, տապահ նա նոցա, բոլորը, ինչոր զուքը խօսումէիք այժմ:»

Պահող կացէք, ոչինչ վործանիք չի պատահի ձեզ իմ կորմից: Կառկած չ'կայ, որ եթէ ես մեանէի և այս կերպով, ինչպէս դուք ասումէք, և այս ժամանակ ոչինչ գալու չէ ձեզ, ինչից որ վախենումէք; բայց միամիտ կացէք, այդ մասին ես լաւ կարգադրութիւն կ'անեմ: Ես այնքան վիրաւորել իմ Աստուծուն իմ կեանքիս մէջ, որ կարողի դարձեալ միանգամ վիրաւորել նորան մահիշ ժամին և դորանով ոչ կ'աւելանայ ոչ կ'ազակասի վիրաւորանիք թիւը: Աշխատեցէք միայն մերեւ տալու այսուն մի սուրբ կրօնաւորին, եթէ այդպատճն կ'զանափի և յետոյ թոյլ ավեցէք ինձ ներգործել: Ես պատասխանաւատու եմ ձեզ, որ բարոր լաւ կ'զնայ թէ ձեր և թէ իմ համարու:

Այս խօսքերը փոքր հանգստացրին Ֆլորենտացիներին. Նոքա չէն համարձակվում աւելի հաւատաւ այդպիսի մի մարդի խոստման: Այսու ամենայնիւ գնացին նորա Ֆրանսիսկական վարդապետների վանքը և հարցրեցին մի սուրբ և լուսաւորված կրօնաւոր, որ դայ խոստովանեցնէ մի Լուիսարդացուն, որը պառկածէ հրւանդ նոցա մօս: Նոցա սվեցին մի այնպիսի հմուտ Աստուծածաշունչի զիարութեան մէջ և եռանդով և բարեպաշտութեամբ լի անձը, որ գրաւելէր բոլոր միաբանների և քաղաքացիների աթենամանծ յարգանքը: Նա եկաւ նոցա հետ հրւանդի մօս: և նատելով անկոզի զիսարարձի մօս, ոկոնց խօսել նորա հետ մնեց բարեպաշտութեամբ և աշխատեց նորան քաջալւերիլու: Յետոյ նանորան հարցրեց, թէ որքան ժամանակէ, ինչ նա չէ խոստովաննիլ: Պարսն շապալին, որին այդ կարելի է բնաւ չեր պատահած, պատասխանեց. Հայր իմ, սովորութիւն եմ ունեցել միշտ խոստովաննիլու ամենափոքր զոնէ միանգամ շաբաթի մէջ, իսկ առանձին միջոցներում, ևս այս արել եմ աւելի յաճախ: բայց այս տի օր է, ինչեւ հրւանդ եմ և ցաւիս սաստկութիւնը արգելեց ինձ հետեւու իմ կանոնիս: —Ա, ցդ շատ լաւ կանոն է, որդիսկ, և ես յորդորումնեմ քեզ պահել այդ կանոնը, եթէ Աստուծած կ'օգործի երկարացնել քո կեանքը: Ես կարծումնեմ որ, եթէ զու այդպիս յաճախ ես խոստովաննիլու, փոքր դորդ կ'ունենաս ինձ ասելու և ես նոյնպիս փոքր կ'ունենա՞ք քեզ հարցնելու: Ոհ, այդպիս մի ասէք, իմ զերապատի հայր, ևս երբէք չ'եմ խոստովանվում առանց այսունելու երբ և իցէ իմ զործած բոլոր մեղքերը, որոնք կարողեմ մոտաբերել, ճնշած օրիցս մինչև խոստովանութեան բոպէն, ուրինմա զաշումնեմ, իմ բարի հայր, հարցրէք ամեն մեղքը մանրամասնաբար յիմ առ մի, իբր թէ ես երբէք չ'եմ խոստովանվել:

Մի՛ խոճաք բոլորովին իմ նվազ. և թոյլ զրութեանս, ես ցանկանում առաւել մեացնել իմ մարմինը քան թէ վասահանաւ կորցնելու մի հողի: որ Աստուծած չ'արհամարհեց փրկելու իւր թանկազին արիւնով:

Այս խօսքերը շատ հաւանեց սուրբ կրօնաւորը, և նոքա լաւ կողմից նախագուշակել ովեցին ապահաւարողի խիզը: Նորա բարեպաշտ զործունէութիւնը գովաբանելուց յետոյ, նպա սկսեց նորան հարցնել:

թէ չէ բարկացրել արդեօք երբէք նա Աստուծուն մի կնոջ հետ։ «Հայր Իմ, պատասխանեց Շատպղին, խորին յոգոց հանելով՝ ամաշումիմ առ սել այս մասին։—Ասա համարձակ, որդեակ։ թէ խոստովանութեան ժամանակ, և թէ այլապէս, ճշմարտութիւն ասելը մողք չէ։—Այդ համոզմամբ, պատասխանեց Շատպղին, կարողեմ որինմա ասել ձեզ, որ այդկողմից մինչև այժմ ես այնպէսէեմ, ինչպէս ծնված եմ իմ մօրս արդամոցից։—Օրնոված լինիս, աղասակից խոստովանահացը։ Որքան իմաստուն ես եղել ։ Քո վարմունքը այնքան առաւել արժանաւորէ, որ զումնացնից աւելի աղատ ես եղել հակառակը որդիկուու, եթէ միայն կամենայիր։—Խակ մեղանչած չկաս արդեօք որկրամութեամբ ( շատակերութեամբ)։

Ներեցէք ինձ, հայր, ես այդ մասին մեղանչելոմ շատ անդամ, և զանաղամն կերպով։ Բայց սովորական պասը բռնկելուց բարեկացառ անձների նման, ես սովորութիւն եմ ունեցել երեք օր շաբաթի մէջ պահէլ միայն հայով և ջրով, և ես, մտքումսէ, խմամէի այս ջուրը միենանից ուրախութեամբ, ինչպէս ամենանպարտ արքիցողներ խմունին առ մինալաւ դիմին; և մանաւանդ մի միջոցում, երբ ես, յոգնութենից ձնչված, գնումենմ եղել բարեկաչտութեամբ ուխտաւելի։»

Նա աւելացրեց, թէ երբեմն նա ցանկացելէ մեծ ցանկութեամբ ուտել այն սալաթից, որ քաղումին կանայք դաշտերում; և թէ նոյն պէս երբեմն մինչև այն աստիճան քաղցրէ թւել նորսն իւր հացը, որ ներելի չէր այնպիսուն, որը ինչպէս նա, պաս երականում աստուածակաշուտութենից, «Բոլոր այս մեղքերը, որդեակ իմ, շատ բնական են և շատ թեթե; ուրեմն պէտք չէ, որ քո խորհը դորա համար վրդուված լինի։ Ամեն մարդին կ'պատահի, ինչպիսի սուրբ ես կամենայ լինել, ցանկութիւն ունենալ հաց ուտելու երկար ժամանակ պահելուց յետոյն ջուր խմելու, աշխատանքից յոգնելուց յետոյ։—Ուրախ եմ տևանելով, պատասխանեց Շատպղէ եղբացը, որ դուք ասումէք այդ ինձ միխթարելու համար; բայց, հայր իմ, ես չեմ մոռանում, որ այն բոլորը, ինչ որ կատարվումէ Աստուծու համար, պիտի լինի մաքուր և անարտ, և թէ մարդիկ մեղանչումնն, եթէ այլապէս են վարդում։»

Սուրբ հայրը զմայեցաւ այսպիսի խօսակցութիւնը լսելուց՝ «Ես չափազանց ուրախ եմ, ասաց նա նորան, քո այզպիսի մտածմունքին և քո խղճմանքի գեղեցկութեան։ Բայց ասն ինձ, մեղանչել չես երբէք Ժատութեամբ, ցանկանալով չափազանց անիմաստ հորսութիւն կամ բռնելով այն, ինչ որ չ'էր պատկանում քեզ։ Ես չէի կամենայ, որ զուք այզպէս մտածելէիք անդամ, պատասխանեց ապաշխարողը։ Թէ և զուք տեսնումէք, որ ես բնակվում առկոսառուների հետ, բայց, գիտաք Աստուծուն, ես ոչինչ չ'ունիմ նոցա հետ բաժանելու։ Եթէ ես եկելում սոցա տունը, այն պատճառով միայն, որ ամաչեցնեմ սոցա և աշխատեմ հանել սոցա այն զգինի առետուրից, որով պարապումն

սոքա ; և ես հաւատացած եմ, որ ես կհասնէի իմ հապատակիս, և թէ Սատուած չէր ուղարկել ինձ այս ծանր հիւանդութիւնն :

Իմացէք ուրեմն, հայր իմ, որ նա, որին ես պարտական եմ այս իմ թշուառ կեռնքս, որ ահա վերջացնումեմ արդէն, թողեց ինձ մի հարուստ ժառանգութիւն : Խոկրյն նորա մահից յետոյ, ես նվիրեցի Աստուծուն այն հարստութեան մեծ մազը. որ թողել էր նա ինձ, և մնացորդը ես պահումէի նորա համար միայն, որ կարողանամ ապրել և օդնել քրիստոսի աղքատներին : Չարկաւորէ ձեզ տօհիմ նոյնակս, որ նուցա առաւել մեծ օգնութիւն հասցնելու համար, ես սկսեցի վոքքը վաճառականութիւն անել : Ճշմարիտ ասեմ, ես բաւական շահվիցայ, ես միշտ տվելեմ վաստակածիս կէսը աղքատներին, պահելով միւս կէսը իմ պիտոյքներիս համար ; սորա համար Աստուած ինձ այնպէս օրէնեց, որ իմ գործերու միշտ օրէցօր լաւանումէին :

Յատ լու, ես արել, պատասխանից կրօնաւորը ; իսկ առաջ, քանի անդամ բարկացած կատ ?—Ոչ, այդ ինձ յաճախէ որստահել, ասաց եղբայր Յափալլէն, և ես արժանի եմ ձեր յանդիմանութիւններին այս մասոն : Բայց ինչպէս կարելի իւրան դսպել, անմնելով մարդիկների պապականութիւնը, որոնք անարդումնն Աստուծու պատվիրանքներ և բոլորովին չեն լվախնում իւրեանց դատողութիւնների համար . Այս, թէ ե ամօթ է ինձ, բայց յայտնումնեմ, որ պատահէլ ինձ չատ անզամ օրի մէջ ասել ինձ—ինձ, առաւել լաւ չըր լինի, որ մեռնի, քանիթէ ցաւելով տեսնեի ինչպէս երիտասարդները ընկնումնն դարիս ունայնութեան ետեից, յաճախ մանենդալիս անսառակութեան տեղերում, հնուանումնն եկեղեցներից, երդիւմնեն, երդմնադանց են լինում, մանենդալիս մի խօսքով աւելի կորուսոփ, քան թէ Աստուծու ճանապարհներով !

Այդ մի սուրբ բարկութիւնէ, ասաց այն ժամանակ խոսսովանահայրը; բայց երբէք չես փորձել, որդու գործած լինիս ինչ իցէ սպանութիւն, կամ զոնէ անարգած լինիս մարդին կամ անիրաւութիւն լինիս արած նորան?—ինչպէս, հայր իմ, զուք, որ ինձ երևումէք Սատուծու տցը, ինչպէս էք կարողանում այդպէս խօսել ? Եթէ ես դիտաւորութիւն ունեցած լինէի միայն այդ գործերից մին անելու, կարծումէք միթէ, որ նա կ'թողնէր ինձ այսքան ժամանակ երկրիս երեսին? Այդ գործերը կարողնեն միայն աւազուկներ և մարդասալաններ, և ես երբէք չեմ պատահած այս թշնամներից մի այնպիսուն, որի դարձի համար չ'լինիմ ինդրած Աստուծուց :

— Այդ Աստուածը թող օրէնէ քեզն պատասխանեց այն ժամանակ խոսսովանահայրը : Բայց ասա ինձ, ոիրելի որդեսկ իմ, պատահած չէ քեզ երբէք սուստ վկացութիւն տալ ուրիշի դիմ ? բամբասած չ'կաս արդեօք լինկերիդ ?—Այս, ճշմարիտէ, զերապատիս հայր, ես ուրիշի համար վատ եմ ասել : Մի օր ունէի մի հարևան, որ ամենանդամ, երբ չափաղանց խմած կ'լինէր, անդաստումէր իւր կնոջ առանց պատճառի,

Խղճաւլով այդ ողորմնի արարածի վերա, ես հարկաւոր համարեցի իմաց-  
անել՝ նորա ծնողներին նորա ամուսնի գաղանութիւնը :

— Բայց, շարունակեց խառտովանահայրը, դու ինձ ասացիր, թէ  
դու վաճառական ես եղել; Խարբած չես երբէք ոչոքին, ինչպէս չառ  
յաճախ անումեն այս կարդի մարդկի՞ Մինին եմ միայն խաբել, հայր  
սուրբ; որովհետեւ մտքումոչ, որ մի մարդ բերեց ինձ մի օր մահողի  
փողը, որ պարտական էր ինձ; ես զրեցի այդ փողը առանց հաշեւլու  
քուսկի մէջ; մի ամսից յետոյ, ես նկատեցի որ նա տվել էր ինձ չորս  
դիմուրով աւելի քան թէ հարկաւոր էր և զ'կարողանալով նորէն տես-  
նել այն մարդին, ես այդ փողը ուղարմութիւն տվեցի նորա կողմից, մի  
տարի այնու ամենայնին պահելուց յետոյ; — Այդ ոչինչէ, սիրելի որդիակ  
իմ, և դու շատ լաւ ես արել, որ այն փողը գործ ես դրել այդ կերպով; »

Կրօնաւոր հայրը արեց դարձեալ ուրիշ շատ հարցմունք իւր ասկաց-  
իսարողին: Այս պատասխանեց ամեն հարցմունքին դրեթէ նոյն ծեոլ,  
ինչպէս պատասխանել էր առաջիններին: Խոստովանահայրը պատրաստ  
էր արդէն արձակումը տալու նորան, երբ Շապալէ Եղբայրը ասաց  
նորան, որ նա ունի դարձեալ մի մեղք նորոն յայտնելու: «Ինչէ այդ  
մեղքը, սիրելի որդեակ իմ? — Ես մտաբերումնմ, ասաց ապաշխարսով,  
որ ես սրբելմ տվել ծառախ տունը կիսրակէ կամ տօնի սուրբ օրին:»  
— Այդ բալորովին չ'պիտի քեզ սնհանդուսացնէ, պատասխանեց Փրկչի  
սպասաւորը. այդ ոչինչ է: — Ոչինչ, հայր սուրբ! մի խօսէք այդպէս: Կիւրակէն արժանի է առաւել յարզութեան, որովհետեւ սա տշխարհիս  
դրկչի յարութեան օր է:

— Աւելի ոչինչ չ'ունիս ինձ ասելու, որդի իմ? — Այս օր անզգուշու-  
թենից ես թքեցի Փրկչի տաճարում: Այս պատասխանի վերա բարի  
կրօնաւորը սկսեց ծիծաղել և խացրեց նորան, որ այնոր մէջ չկար ոչ-  
ինչ մեղք, «Մենք, որ եկեղեցականներ ենք, աւելացրեց նա, մեղ ես  
պատահումէ այդ ամենոր: — Աւելի վաստ, հայր սուրբ; անվայել է այդու-  
ծելու այդպիսի կեղտոտութիւններով տաճարը, որտեղ պատարագին մա-  
տուցանում Աստուծուն:» Գարձեալ քանի մի ժամանակ նորան քարո-  
ղելուց յետոյ այստեսակ մնութաբանութիւններ, մեր կեղծաւորիմած բա-  
րեկաշտը սկսեց յոդոց հանել, և լալ; որովհետեւ այս անզգամը լալիս  
էր երբ կամենումէր; — «Ինչի ես լալիս, սիրելի որդեակ իմ? ասաց նո-  
րան սուրբ հայրը, երբ այն տեսաւ նա: — Ո՛չ պատասխանեց ապաշ-  
խարողը, խղճմտանքիս վերա ես ունիմ մի մեղք, որ ես երբէք չեմ  
խոստովանել և չեմ համարձակում յայտնել նորան ձեղ. ամեն անզամ,  
երբ ես մտաբերումնմ նորան, չեմ կարողանում չ'թափել արտասուք-  
ներ, յուսահասթիւլով, որ երբէք չեմ կարողանայ ստանալ նորա ար-  
ձակումը Աստուծու առաջ: — Ինչի մասին է քո խօսքը, որդիակ իմ,  
այդպէս խօսելով? Մի մարդ, թէն նա մեղանչած լինէր այն բոլոր  
յանցանքներով, որոնք կատարվել են աշխարհի սկզբից և որոնք կա-

ապամինուր և միջնա գարերի վերջը՝ եթէ ապաշխարէր և ապաշաւէր տիմպէս, ինչպէս դու ևս անում, հաւասար պիտի լինէր արձակումը առանալու այն բոլոր մեղքերը խոստովանելուց յիսայց այնքան մեծ են Աստուծու ողորմածութիւնը և բարութիւնը ։ Ուրիշն ասա համարձակ ինչ որ առնիս բարիդ վերա, — ու, հայր սուրբ, ասաց Շապալէ հղբայրը, թափելով բոլոր ժամանակ դաւն արտասուրներ, այս մեղքը չափազանց մեծէ : Ես զգալուանում մինչև անդամ հաւասար, որ Աստաւած բարձրածի ներել ինձ այն, եթէ ձեր ալօթքներով գուք չ'օդնէք ինձ նորան խութ շարժելու : Առա ասում եմ քեզ, առանց վախենալու ամեննեխն ; ևս քեզ խոստանում աղօթել ֆրկչին քո համար, Հիւանդը լալիս եր բոլոր և չը խօսամ: Նա երեսումէր փոքր էր համոզվել այս խօսքերից ; նա լալիս էր զարձեալ և լուռ էր մնում յամառութեամբ: սուրբ հայրը սովորամէ նորան, խօսումէ նորա հետ քաղցրութեամբ և գործէ դնում ամեն հնարք նորան վատահութիւն և հաւասարմութիւն աղդելու համար; բոյց նա լուսմէ միայն սուրբ, հառաջանք և հեծիծանք, որոնք առաւել շարժումն նորա սրաի մէջ կարեկցութիւն, դէսի ապաշխարողը: Սա վախենալով նորա, համբերութիւնը սպառելուց վերջապէս: «Որովհեան դուք ինձ խոստանումէք, ասաց նա նորան հաղոց հանելոյ, Աստուծուն խորելու իմ համար, ձեզ խոստովանվում են, հայր սուրբ, ձեզ խոստովանվում են, որ լինելով զես ևս փոքրիկ երեխա, ևս անիծեցի . . . . երկինքը ինչպէս զգալու ինձ վերջայնել ! ևս անիծեցի իմ մայրը : Սա խօսքը ասաց թէ չէ նորին սկսեց արտասվել: Այն ժամանակ խոստովանահայրը նորան հանգատացնելու հսմար ասաց նորան, չ միթէ դու կարծում ես, որդեակ իմ, որ այս մեղքը մեծ է՞ մարդիկ հայրութիւնն Աստուծուն ամեն օր, բայց այնու ամենայնիւ, երբ նորա զզջումն անկեղծութեամբ, որ նորա հայրութեն նորան, նա նոցա ներումէ : Միթէ կարողես դու սորանից յետոյ երկբայիւ նորա ողորմածութեան մասին? Ազավինիր նորան և դարձիր արտասվելուց : Եթէ դու մինչև անդամ նոցա թւկց լինէիր, որոնք խաչեցին նորան, դու կարողէիր այդ քո զզջմանը յուսալ քո ներումը ստանալու : — Ենչէք ասում? ասաց կենդանութեամբ Շապալէ հղբայրը Անիծել եմ մայրը ! իմ խեղճ մայրը, որ ինձ ման է ածել ինն ամիս իւր արդանդի մէջ զիշեր և ցերել, որ ինձ հարցիր ամովամից աւելի վաթշաթելէ իւր վզին: Այս չափազանց մեծ մեղքէ, և երբէք չի լինի սա ինձ ներված, եթէ դուք չէք ինսդրի Աստուծուն եմ համար բոլոր այն ջերմանութեամբ, որին ընդունակ էք դուքս խոստովանահայրը տեսնելոյն, որ հիւանդը չ'ունի ովնչ աւելի ասելու, օրհնեց նորան և ալիք, արձակումը, համարելով նորան բոլոր մարդիկներից ամենախոհն և ամենասարք մարդ; որովհեամ նա հաւասարմէր որպէս աւետարանի խօսք այն բոլորը, ինչ որ լուի էր, չան և ովչէք հաւատա՞ք? ովէ կարողէր երկալայել, թէ մարդս ընդունակ կ'լինէր մինչև այն աստիճան ծամարապնդինը դաւաճանելու իւր

կեանքի վերջին բռուէում? «Որդեւակլ իմ, ասաց նա յետոյ նորան, ևս յոյս ունիմ, որ դու շուտ կ'առողջանաս Արտօւծու օգնութեամբ; բայց եթէ նա կամենայ կոչէլ քո մաքուր և սուրբ հողին դէպի ինքը, ուրախ կ'լինէիր արդեօք, որ քո մարմինը թաղվէր մեր վանքի մէջ? — Այս, հայր սուրբ իմ, և ես նեղացած կ'լինէի, եթէ նա ուրիշ տեղ թաղվէր, որովհետեւ դուք ինձ խոստացաք Ասառուծուն ազօթելու իմ հսմար և ես միշտ ունեցել եմ մի առանձին լարգ դէպի միաբանութիւնը: Բայց ևս սպասումն ձեղանից մի ուրիշ ողորմութիւն. խնդրումն ձեղ այն ինչ կ'զաք ձեր վանքը ուղարկել ինձ, եթէ թոյլ էք տալիս ինձ, մեր Փրկչի ճշմարիս մարմինը, որ դուք պատարադեցիք այսոր առաւօտ: Ես ցանկանումն ըստունել նորան, թէս բոլորվին անարժան եմ նորան, նոյնպէս և վերջին օծումը, որ, եթէ ևս ապրել եմ որպէս մեղաւոր, գոնէ մհանեմ որպէս բարի քրիստոնեա:

Սուրբ հայրը պատասխանեց նորան, որ նա յօժարութեամբ համաձայն է; նա շատ գովեց նորա եռանդը, խոստացաւ նորան կատարել ինչ որ նա ցանկանումէր և բանեց իւր խօսքը:

Երկու Ֆլորենսուացիները, որոնք շատ կն վախենում, որ Շապալէ եղբայրը նոցա չխարելը, կանգնելէին միջնորմի (պերեգործք) եակից, որ բաժանումէր հիւանդի սենեակը նոցանից և ունկնդնելով ամսն ուշաղրութեամբ, նոքա լսել էին բոլորը ինչ որ ստումէր հիւանդը կրօնաւորին, որից շատ ինչ փոքր էր մեացել չշարժէր նոցա ծիծաղը: «Սա ինչ մարդ է! ասումէին նոքա ժամանակ ժամանակ: Տես թէ ոչ ծերութիւն, ոչ հիւանդութիւն, ոչ յայտնի մահի մերձաւորութիւն, ոչ ևս Աստուծու երկիւղ, որի զատաստանին նա պիտի քանի մի բոլիներից ներկայանայ, չկարողացան դարձնել նորան անիրաւութեան ճանապարհից և արգելել մեսնել այնպէս, ինչպէս ապրել է: Բայց տեսնելով, որ նա ունենալու է թագման հանդէսը, եղական գործ, որի մասին մոտածումէին նոքա, շատ փոքր էին անհանդատանում նորա հոգու վվճակի համար:

Փոքր ժամանակից յետոյ Շապալէին արդարե բերեղին սրբութիւն: Նորա ցաւը աւելացաւ և այս արդար մարդը մեռաւ նոյն օրի երեկոին, վերջին օծումը ստանալուց յետոյ: Երկու եղբայրներ շտապեցին խացնելու կրօնաւորներին, որ նորա թագման պատրաստութիւն տեսնեն և գան, սովորութեան համեմատ, սազմու կարդալու հանգուցածի վերա:

Այս լուրից յետոյ այն սուրբ հայրը, որ խոստավանեցրել էր հանդուցածին, գնաց վանահայրը գտնելու և ժողովել տվեց միաբանութիւն, երբ հաւաքվեցան բոլոր միաբաններ, նա ասաց նոցա, թէ Շապալէ եղբայրը ապրելէր միշտ սրբութեամբ, որքան միացն նա կարողացել էր խմանալ նորա խոստավանութենից և թէ նա չէ երկբայում, որ Աստուծ գործելու է նորա ձեռու բազմաթիւ հրաշներ; նա հաւատացրեց նոցա հեանեաբար, թէ հարկաւոր էր ընդունել այս սուրբ մարդի մարմինը աստուծաշատութեամբ և պատովէ Միակերպ դիւրահաւաս վահահսցը:

և բոլոր կրօնաւորները համաձայնվեցան և ամենեքնան զնացին համ-  
դէսով, ղիշեր անցկացնելու աղօթքներով հանգուցածի մօտ : Միւս օր  
խրհանց շապիկներ և մեծ չուրջառներ հազած, զիրքը ձեռին, խաչը  
տռաջ տանիլով, նոքա զնացին այն սուրբ մարտինը տառնելու և բարե-  
ցին շքեղ հանդէսով իւրևանց եկեղեցի, հետ ունենալով ժողովուրդի միծ  
բազմութիւն : Նորան խոստովանեցնով հայրը բարձրացաւ նոյնժամ ամ-  
բիսն և հրաշալի դործեր պատմեց հանգուցածի մասին, նորա կեանքի,  
նորա պասերի, ողջախոհութեան, պարզաւրտութեան, նորա անմեղու-  
թեան և նորա սրբութեան մասին : Նա չմոռացաւ ուրիշ գործերի հետ  
պատմել և այս ինչ որ երջանկահողի Շապալէն ասել էր նորան որաէս  
նորա ամենասեծ մեղք և սուրբ հօր զոլ ծղրված աշխատութիւնը հան-  
գուցածին հասկացնելու, թէ Աստուած ներելուէ նորան այն մեղք : Յե-  
տոյ այսպործը պատճառ զնիլով իւր լսողներին քննիլու, նա դառնումէ  
դէպի նոքա և աղաղակումէ : «Իմ զուք, մեղաւորներ, որ ամենափոքր  
զործի համար հայհոյումէք Փրկչին, Աստուածածնին—նորա մօր և Արքա-  
յութեան բոլոր սուրբելին, կարծումէք միթէ, թէ Աստուած կարողէ  
ձեղ ներնլ ? » Նա շատ ընդարձակվեցաւ նորա ողորմածութեան, նորա  
արդարութեան և նորա խղճաւանքի անշափ ազնւութեան վերա : Մի  
խօսքով նա խօսեց այնպիսի զօրութեամբ և պերճախօսութեամբ նորա  
առաքինութիւնների վերա և այնպիսի մի տպաւորութիւն գործեց իւր  
լսողների վերա, որ այն ինչ վերջացաւ պատարազը, անսան, որ բոլոր  
ժողովուրդը լալիս էր գառնապէս Շապալէն մարմնի վերա : Ումանք համ-  
բուրումէին ջերմնանդութեամբ նորա ձեռներ, ումանք պատառումէին  
նորա հազուս ; և նոքա, որոնք կարողանումէին ստանալ նորահաղու-  
տի մի փոքր կտոր, համարվածէին մեծապէս բաղդաւոր : Որպէս զի ա-  
մանեքհան կարողանան նորան տեսնել, նա դրված էր այնտեղ բոլոր  
օր ; և երբ զիշերը հասաւ, նորան թաղեցին առանձին հանդէսով, մի  
մատութի մէջ : Միսօր առաւատից սկսեց գալ նորա զերեզմանի վերա  
բոլոր ժողովուրդը բազմութեամբ, ումանք—նորան պատևելու և փա-  
ռաւսրելու, իսկ ուրիշները—իւրեանց աղաչանք մատուցանելու համար ;  
սոքա մոտ վառելու, իսկ առաջնիները—իւրեանց արած ուխտազրու-  
թեան համեմատ մոմեղէն պատկերներ պատկերի վերա կախելու, գեր  
ջապէս նորա սրբութեան համբաւը այնպէս տարածվեցաւ և արմատա-  
ցաւ ամենեցուն մաքերի մէջ, որ քանի մի տեսակ պատահած ձախոր-  
դութիւնների մէջ գառնումէին միայն բացառապէս դէպի նա պաշտպա-  
նութեան և խնամակալութեան համար : Նորան կոչեցին սուրբ Շապալէն  
և մընչև այն ստափան հասցըն լւրեանց մաքի յավշտակութիւնը, որ  
սկսեցն հաստատել, որպէս թէ Աստուած գործել էր և զործումէր ա-  
ման որ բաղմաթիւ հրաշներ նորա ձեռուլ :

Այսպէս ապեցաւ և մեռաւ Շապալէն Դիւրբան, որ զամանեցաւ սուր-  
բերի կարգում, ինչպէս իմացաք այս մեր պատմվածից :

ՄԻ ՕՐ ԹԻՖԼԻՍԻ ՄԵԶ: (Նամակ, Թարգմանութեալիքնից):  
Օգոստաս, 1864, Թիֆլիս:

Դու ինձ ճշմարիտ էիր ասում, բարեկամ, երբ հաստատումէիր, որ մի օրում կարելի չէ ոչինչ տեսնել առաւել հետաքրքիրը այս հետաքրքիրը—քո խօսքով—քաղաքի մէջ: Բայց ես, ինչպէս տեսնում ես, ստօիկ(1) կմ այս բառի բռն նըշշանակութեամբ, այն նշանակութեամբ, որ ունի սա այն հիւրանոցների խօսակցութեան մէջ, որոնց ես թողեցի և որտեղ առաջարկումեմ քեզ զվարձանալ առաջնան պէս նոցա բալոր դատարկ գեղեցկութեամբ—և ես բաւականումեմ այն սակաւով, ինչոք կայ...: Բայց ես արդէն տեսնումեմ—զու թժվեցրիր երեսդ, զու չես սիրում, երբ ես սկսումեմ նախատել և հայհոյել: Դու ասումես, որ մարդու ծնվումէ ոչ թէ մասածելու և հայհոյելու, բայց ապրելու համար... և նամակներ գրելու, կ'աւելացնեմ ես ինձանից: Բայց զու կամենումես նորէն բերանից խօսը առնել, կարծես զու նորէն կրկնումես, որ կեանքի մէջ նկատողի ուշադրութեան արժանի է այն միայն, ինչոք ծածկը վածէ ուրիշներից դիմակի (մասկի) տակ... և այդով որպէս թէ կամենումես խել ինձանից ցանկութիւն իմ նամակը շարունակելու, ակնաբեկելով այդպիսի նուրբ կերպով, որ մի օրում ես չեմ կարողանայ նայել ոչ մի դիմակի տակ: Դու կարծումես, որ քո նման, չհայելով, որ զու արդէն երկու տարուց առելի (այսպէս է ցայց տալիս մեր փոքրիկ քաղաքի տարեգրութեամբ) առաջարկ այդպիսի գուցէ և Ստօիկ» բառի նշանակութիւնը: Վեկնումենք այդ բառը «Ստօա» կամ «Ստօիա» առանձին շինուած տեղեր, Աթենքի մէջ Յոհանատանում: Այստեղ ակնվեցաւ Ստօիկեան առաջած իմաստասիրական դպրոցը: Այս զալուցի հիմարկողն էր Զենան իմաստասէր (IV դարում ք. ծ. ա): Զենոնը ուսուցանումէր, որ մարդու համար նույն կութեն ան միայն այն ժամանակ, երբ նա անսայթաք սառնար տութեամբ տանումէ կեանքի բալոր պատահարներ և հեղափոխութիւններ, բոլոր դժվարութիւններ և անբաւականութիւններ—ուրախութիւն և տրամութիւն, բաղզաւորութիւն և և անբաղդութիւն: Այս սառնարտութիւնը մանաւանդ պիտի ունենայ մարզ այնոր համար, որ բոլորը, ինչ որ լինումէ, սկզբից ամնանձից կերպով որոշվածէ լինելու մշտիչնաւոր ընական կարևորութեամբ կամ նախասահմանութեամբ (Գալում): Այսպիսի էր Ստօիկների ուսումը:

Խմբադ:

թիւնը ) աշխատումնս նայել Մ տե Էմիլիէ (տիկնոջ էմիլի) դիմակի տակ, բայց մինչև այսօր գեռ դիմակից աւելի ոչինչ չես տեսնում, ես ևս այս կարծ միջոցում՝ ոչինչ չեմ տեսնի այս տեղ. . . . Միթթարվելը. ես տեսայ այստեղի կեանքի երեսյթները բոլորովն առանց զիմակի- փողոցի մէջ : Մին ասելէ. ժողովուրդը կարելի է ճանաչել փողոցի մէջ. իսկ ես կամենումէի միայն տեսնել քաղաքը, և ոչ ճանաչել ժողովուրդը—ուրեմն այս պէտքէ լինի առաւել հեշտ. . . . և ինձ բաւական է զեռ. . . .

Աւելին դէպի գործ! բայց ինչեց սկսել? Ես կամենումէմ տալ իմ նամակին ոչ ընդհանուր ձև, մասնաւանդ որ սա զըրավումէ ոչ ընդհանրանման ընթերցողն համար (ինդրումեմ, ըլվերաւորվեա, բարեկամ) և բաժանել սորան (այսինքն նամակը) զլուներ : Այսպէս :

## I.

## «ԵՐԿԻՒ»:

Մինք շատ յաճախ խօսումէինք քո հետ քերկրի մեծ յառակութիւններերի մասին. . . . Մի զարմանար, որ ես, ցանկանալով խօսել քո հետ Թիֆլիսի վերա, սկսեցի «Երկրից»; այն, ինչ որ կամենումէմ ես պատմել, պատոհեցաւ. նոյնուհետ Թիֆլիսի առաջ :

Երբ ես համսւեմի վերջին ստասիօնին Թիֆլիսից առաջ, հագեւ կարողանումէի նատել անիծված սայլի մէջ—ով և քանի անդամ նորան չէ անիծել—իմ սոկրները ամենայն նոր զարկի հետ կարծես դուրս էին թափում իւրեանց կաշերներից: Անհամբերութենից չարչարված, սայլորդի հետ սկսեցի այսպիսի խօսակցութիւն:

— Քանի վերստ կայ վերջին ստասիօնից մինչև Թիֆլիս?

— Չեմ իմանում, աղա. . . .

— Դու երեսումէ վաղուց չէ այստեղ ձխակար ես?

— Ես? վաղուց է. . . . կարծես երեք տորի պէտքէ լինի շուտով. . . .

— Եւ բոլոր ժամանակ այս ստասիօնի մէջ?

— Հրամերէք այստեղ. . . . ևս մանեմ դալիս միայն ճանապարհը այստեղ (և ցոյց տվեց իւր մարակով առաջում երեսով ստասինի վերա), — և միւսը այստեղ. — (և նա ցոյց տվեց մարա-

կով յետին ճանապարհը):

— Ինչպէս է այդ: որ դու երեք տարու մէջ երեխ ամենայն օր անցնումես այստեղ: այս ստասիօնը և չ'զիտես—որքան մնումէ սորանից մինչեւ քաղաքը:

— Ինչիս պէտք է իմանալ ինձ այս?... ևս հասցնումեմ միայն մինչեւ այստեղը—նա նորէն ցոյց ավեց մարակով ստասիօնի վերա—, իսկ այնտեղ ուրիշը կայ, ուրիշ ձիեր, և նա է տանում և վերստերը գիտէ, բայց ինձ ինչիս պէտքէ՞ իմ գործը չէ...:

— Դու որ երկրից ես?

— Ես? կրկնեց նա իմ հարցը:

— Հա դու: առաջի ես բարկութեամբ, որովհետեւ յօրան-ջող սայլորդը դիստու քարին և սայլը այնովիսի վօրութեամբ խփեցաւ և վեր թռաւ: որ ես վորքը էր մնացել դուրս թռչէի նորանից :

— Մօլդավիաից եմ, պատասխանեց սայլորդը: վայր քաշե-լով գլխարկը դէպի ականջ և խփելով ձիերին (մենք մօտե-նումէինք ստասիօնին), որոնք սրնթաց կերպով մօտեցան կիսա-շէն ստասիօնեան տան մուտքին:

— Մօլդավիաից! կրկնեցի ևս իմ մէջ... իստակ և պարզ «երկիր» է... դու բարեկամ նորէն, ծուռմես երեսդ և մրժի-ջումես: «բառերին ես կալչում»:

## II.

### ԳԻՄՆԱԶԻԱՏ:

**Վ**երջապէս ես Թիֆլիսի մէջ եմ: Շորերս հագնելուց յետոյ ես իսկոյն գնացի պառելու իմ միակ բարեկամիս և մերը ընդհանուր ընկերին նիկօ Հունեանին: Առաջին պատահած ձիա-վարին հարցրեցի: չ'զիտէ արդեօք որտեղէ: Հունեանի տունը? Զիապանը, կարծես, բաւական պարզ առայ ինձ, բայց երբ ես ընկայ նոր և ծուռ, վողցնելի լարերինտոսը, ես բարորովին մուր-վեցայ: Թափառելով զանազան փողոցներում և թաղերում և կարդալով նոցա դժվարիմաստ անուններ, ես եղակացրի, որ նոցանից չըրս մրայն անվանված էին յարմար և Ճիշդ կերպով, այն է—Մեծ ծուռթաղ, Փաքը ծուռթաղ (Большая и Малая кривые) և Յիսոտ և Փտած: իսկ մնացածների մասն ես տա-

րակուսվեցայ, թէ ինչպէս մարդիկ կամցել են կորյոնել այնքան հնարագիտութիւն զանազան դժվարիմաստ անունները գնելով, որոնք բոլը բովածին չեն համեմատվում տեղին : իմ կարծիքով հարկաւոր էր ասել 1 Ցեխոտ, 2 Ցեխոտ, 3 Ցեխոտ և այլն; 1 Ծոռու, 2 Ծոռու, 3 Ծոռու, մերջապէս 1 Հոտած, 2 Հոտած, 3 Հոտած և այլն, ինչքան կամենումեք... և անունները արդէն պատրաստեն: Մին, միայն զանազանելու համար, կարելի է անվանել «Ծողուո» (1) : Վերջապէս ես, կարծես, հասայ իմ նպատակին: բայց կամեցած տունը գտնել չէի կարողանում: իմ համրէպ գալիս էր մի երիտասարդ գիմնազիստ, ինչպէս երեսումէր մօտ 17 տարեկան հասակի: նորա ընչացքը կազին դուրս էին եկած, բայց դէմքը շատ հիւանդոտ և լզարված ունէր:

— Խնդրումեմ ինձ ասել, հարցրեցի ես իհարկէ ռուսերէն, որ տեղէ չունեանի տունը?

— Հունեանի՞ կրինեց գիմնազիստը; հա՞ այն փոքր տունը տեսնումէք? այս ասելով, նա մատով ցայց տվեց փողոցի մէջ:

— Այնտեղ չէ, շարունակից նա: — մեծ տունը անցնել, փոքր տուն կայ, այնտեղ կլինի:

Ես իմացայ; բայց նորա խօսվածը չէի հասկանում թէ ինչը նշանակում, և կրկին հարցրեցի:

— Խնդրումեմ ներել, կարելի է իմ հարցումը ձեզ անհամեստ ժվկի: Դուք որ դաստիան մէջ էք? — Գիմնազիստը խառնվեցաւ:

— Հինգերորդում, պատասխանեց նա, ես հիւադ էի և երկար ժամանակ դասերի չեմ գնացել:

— Երկար ժամանակ դուք չէք գնացել դասերիդ? — հարցրեցի ես, աշխատելով իմ ձայնին հալորդել մեղմ և խաղաղ տօն:

— Ամբողջ տարի, պատասխանեց գիմնազիստը: Մենք ողջ ջունեցինք միեւանց:

— Ես տեսնումեմ, բարեկամ, դու կարմրումես, — բայց ոչինչ չես ասում (2):

(1) Ճանապարհորդիս խօսքերը վերաբերումեն անցած տարուն; այս տարի թիֆլոսի քաղաքային կառավարութեան շնորհով փողոցները տանելի էին, և յոյս կայ, որ այսուհետեւ առաւել մաքրվի քաղաքու:

(2) Ազնիւ ճանապարհորդը կարողացելէ նկատել ուսուական լիգով թուլութիւն: Ոչ պակաս, բայց անհամիմատ առաւել շատ պիտի զար-

## III.

ՄԻԱՄԻՏ ԱՌԱՋՆՈՐԴ-ԶԻՉԵՐՅՆԻ:

Գիմնալիստի շնորհով ես Հունեանի տունը դտայ:  
Այն ինչ ձեռս մեկնելէի զանգակին, յանկարծ դուռը բացվեցաւ  
և սանդուղտի վերա իմ հանդէպ ներկայացաւ իմ սիրելի Նիկօ  
Հունեանը : Մենք միմեանց գրկախառնեցինք բարեկամաբար :

— Շատ ուրախեմ, շատ ուրախեմ, առաց Նիկօն, երբ մենք  
դադարեցինք միմեանց գրկախառնելոց; բայց գիտես ինչկայ:  
ես մի ժամկց յետոյ պիտի դուրս գամ տունից; գիտես, ծառայութիւնէ, աւելացրեց նա, կարծես իւրան արդարացնելու  
համար: Երէկ զլխառպետը (նաշանիկ) հրամայեց ինձ գնալ այսօր  
նորա մօտ առաւոտեան 11 ժամին, և ահա ես գնումեմ:  
իսկ դու, խնդրումեմ, ե՞կ իմ մօտ, տեղաւորվի՞ր ինչպէս քո  
տան և հանգստացի՞ր:

— Ենորհակալեմ; ես ժամանակ չունիմ հանգստանալու;  
ես ձեր մօտ եկել եմ միօրով: Մինչեւ դու կ'վերադառնաս ծառայութիւնից, ես կ'զնամ զեղարան և ուրիշ տեղեր ինձ աւրած յանձնարարութիւններ կատարելու... Միայն ինձ հասկացրու, ինչպէս գտնեմ զեղարանը! Նիկօն հասկացրեց և  
մենք բաժանվեցանք; նա զէպի իւր նաշանիկը, իսկ ես դեղանը:

Մի քանի փողոցներ անցնելով ես, կրկնի չիմանալով թէ  
ուր եմ գնում, կանգնեցայ; բարեբաղդաբար տեսայ, որ իմ  
հանդէպ մի մարդ էր գալս վրացի շորեր հագած:

մանար այսախին, եթէ պատահէր Հայ ուսումնառենչ երխառարդղը և  
հարցը վներ հայկական, երխառարդի մայրենի, լուրի մասին; չ'ամենք ոչինչ հայկական պատմութեան վերա, որի ինչ վնելը, դոցէ և  
անոնը, չ'ունի լած մեր սիրելի երխառարդղը: Մենք հեռու ենք և  
բարողին հեռու այս դործի մէջ երխառարդին մեղադրելուց, արտէս  
անել—հշանակումէր չիմանալ դործի, էութիւնը և զատել վերիսերու...  
Սորա հետ հարկաւոր չէ մոռանալ, որ այս երխառարդիներից պիտի  
առաջ զան ժամանակով մեր այրեր, մեր քաղաքայիններ: Մենք հաւատացած ենք, որ կ'զայ մի օր, երբ մեր սիրելի երխառարդիները  
կ'ցանկանան իմանալ իւրեանց պղղի պատմութիւնը և մենք պատրաստ  
ենք նոյցա սալու հնարներ:

— Թայլ ովկիցէք հարցնել որտեղ է գեղարանը?

— Զեկ գեղարան է հարկաւոր? ես ևս գնումեմ այն կողմը և կարողեմ ձեզ առաջնորդել. գնանք միասին:

— Շատ ուրախեմ: — Մենք ճանապարհին սկսեցինք խօսել ևս նկատեցի, որ իմ առաջնորդը ինձ ֆրանսիացի կարծեց իմ մօրուքի պատճառով:

— Ասացէք խնդրումեմ. ձերերը առհասարակ վատ են խօսում ռուսերէն, իսկ ձեզ ճանաչել ես դժվար է?

Զկանենալով ներան մոլորութենից ազատել, ես պատասխանեցի, որ ես երկար ժամանակ սովորումէի ռուսերէն:

— Հա այդ շատ լաւէ: Բայց ձերերը միշտ այդպէս են: Նոքա եթէ մի ժամկի համար ևս գան, մեր մօտ վաճառական նութեան համար, կ'աենես, որ արդէն հասկանաւմէ և խօսումէ այստեղի կերտով ռուսերէն: Իսկ մոռոր Աստուած գիտէ նոցա և ծերանումէ այստեղ, բայց մի բառ ես չէ կարողանում սովորել — գիտէ միայն «մօխտա» «մօղի»:

Այդ ժամանակին մենք անցնումէինք բաւական գեղեցիկ և մեծ տան առաջ:

— Ում տուն է սա՞ հարցրեցի ես:

— Ում? իհարկէ Հային: Նոքա մեղանից փողեր են վաստակում և տուներ են շինում... դարձուրելի ազգ! աւելացրեց նա բարկութեամբ:

— Հա, հիմնալի տուն է, զեղեցիկ տուն է, նկատեցի ես շը նորհակալութեան ձևով իմ շիշերօնէին:

Երեխ, կամենալով ինձ վրէժինդիր լինել. հարցրեց ինքնաշաւանութեամբ:

— Զեր մտ, Ֆրանսիաում, իհարկէ այսպիսի տուներ չկան?

— Ինչէք ասում? այնտեղ այսպիսիները չեն էլ երեսում... այնտեղ բոլորը վեց յարկանոցներ են. — Եղ վախեցայ ությ յարկանոցներ ասել, որ կասկած չմտնէ իմ խօսքի անկեղծութեան մասին: Եւ իմ կարծիքը բոլորովին ուղիղէր: Վարցին կասկած աւոր կերպով շարժեց զլուխը և աւելացրեց.

— Միթէ կարելի է՞ ասացէք, խնդրումեմ: Ես չգիտէի ես... հանաք չէք անում, հարցրեց իսա ինձ, ինկվիզիտորի պէս իմ երեսը նայելով:

— Ամենին չեմ: Չեղ հաւատացնում եմ: Հէ!

— Ասացէք, ինդըումեմ; իսկ ես՝ կարծումեի: որ բոլոր աշխարհի վերա Թիֆլսից մեծ և զեղեցիկ քաղաք չկայ... իսկ դուք ասումեք «Վեց յարկանոցներ»: Ճշմարիտ ես այս ամենին չեմ կարծել:

— Դուք երևի Թիֆլսից երբէք դուրս եղած չ'էք?

— Չ'է, փառք Աստուծուն, չ'եմ դուրս եկել; Վաթուսն տարուն հասել եմ: Աստուած ինձ ողջոմելէ և չ'եմ դուրս դնացել քաղաքից: Այժմ ահա պիտի մտնեմ այն փողոցը, բայց Չեղ մինչեւ կեղարան կհասցնեմ:

— Ենորհակալեմ Չեղանից: — Վերջապէս մենք հասանք և բաժանվեցանք:

## IV.

ՅԵՏ ԿԱՆԳԵՆԵՅՐՎԱԾ ԱՍՏԻՃԱՆԱԽՈՐ ՈՐԵ ՀԱՀԱՍ ՍԶՆԻԱԿԱՆ ՆԵՐԻՅ:

Յիշված տունից դուրս գալով ես վերադարձայ դէպի Հունիանը: Ես հանդիսա քնումեի: մոտածելով կարմիր ներկի զարմանալի յատկութեան վերա: Ի՞մ առաջ դնումէր նմանապէս ծանր քայլելով մի պարոն, որ հագած ունէր բարակ սև մաշուղից սիւրառուկ գեղին կոճակներով: Բայց ես կարողացայ ահեսնել մի կողմը, յետին կողմը, որ գեղեցիկ էր, իսկ միւս երեք կողմեր չեմ երևում: Նորա վարտիկը թխապագոյն էր և չորս վերշոկ բարձր հողեցարշէն վերջանումէր: Կօշիկները բուրովին թեքվել էին մի կողմ: Պարոնս ինչպէս երևումէր արտագրողէր կամ քաղաքական դրագիր: Նա գնումէր բուրովին անհաստատ քայլերով և մի ինչ քրթմնջումէր իւր քթի տակ: Ես մօտենայ և լսումեի, ինչպէս գատումէր... Այստեղ ես թողնումեմ այն խօսքերը փաքը մի խնայելով պատշաճաւորութեան ամենաներողամիտ կանոնները...

— Յուցա՛, շարուն սկեց նա, առողջ ես, բարեկամ! պա՛, պա՛, պա՛... Գինեղին ես վաճառում՞՝ բաջ ես, ճշմարիտ քաջ: Բայց այնուամենայնիւ սկարտք չեմ հաւատայ, աւելացրեց նա յանկարծ:

— Չ'եմ հաւատայ, ծանր պատասխանեց Յուցան: Պարտք տալը չկայ:

— Իսկ ծառայութեան համար? Հարզեց պաշտօնագուրիլ:

Եւ նորա երեսը մի բռագելի մէջ՝ կարծես, վայլեց : —  
— Ինչի համար? ինչ ծառայութեան համար? հարցրեց  
Յուցանի:

— Ահա ինչի համար! Այս ինչեւ տախտակիդ վերա, ուղեղ  
չես գրել, հարկաւորը? Այստեղ Յուցաի մօտ գեանի վերա ըն-  
կածէր նշանակ այս վերնագրով «կախեթեան գինու և զանազան  
խմիչների պանդոկ» (Подвалъ кахетинскихъ винъ и разныхъ  
напитковъ); Այս վերնագիրը նոր էր գրված, դեռ չէր սրա-  
ցել և նորա գրող վենւորը իւր ներկիրով կանգնած էր այնտեղ:

— Հարկաւոր էր գրել, շարունակեց պաշտօնագուրիը, որ  
պանդոկը քո՞չ; թէ չէ այստեղ գրվածէ իւր պանդոկը քո՞ն չէ:

— Ինչպէս? հարցրեց Յուցան, որ, ինչպէս երեսմեր, վատ  
էր հասկանում գործը, բայց վերջին խօսքերով նեղացած. ումնէ  
պանդոկը? իհարկէ իմա! առելացրեց նա:

— Չ'է, քո՞ն չէ:

— Չ'է, իմա է:

— Կարդա՛, եթէ չես հաւատում:

— Ինքդ կարդա՛, տաքացած ասաց Յուցան.

— Հա՛, ես տեսնումեմ, գրվածէ «պանդոկ կախեթեան գի-  
նու» և ոչ քո՞:

Այսպէս կ'մտածեն ամենեքեան: Տուր մի բաժակ օղի. ես  
խորհուրդ կտամ, թէ ինչպէս պէտքէ ուղղել սխալը:

— Եւ եթէ ճշմարիտ այսպէս գրված լինի, որ իմա չէ պան-  
դոկը, ինչ անել, նորէն արտազրել! թանկ կ'ստի:

— Կորէն գրել տալ չէ հարկաւոր; դու միայն մի բաժակ  
օղի տուր, իսկ ես երկու տառ կ'դնեմ, ուր հարկ է, — և լաւ  
դէնի:

— Հա՛ եթէ այդպէս է, կ'տամ:

— Կ'տամ? չես խաբի?

— Կ'տամ, կտամ, ինչի համար խաբել.

— Ուրեմն գրիր, դարձաւ պաշտօնագուրկը գէպիվերնագրով: Ահա այնտեղ և այստեղ հարկաւորէ ի տառը: Վերնագ-  
րով գրեց: Դուրս եկաւ վերնագիրը բոլորովին առանց  
իմաստի: Յուցան բաւականոցաւ. պաշտօնագուրիը մտաւ  
պանդոկը: Ես ես գնացի իմ ճանապարհ: Անբաղդ, միմնցու-

մես զու, բարեկամ! Հանդարտ, ասումեմ ես քեզ; լուր կաց  
և դու կրկին լռումես, — լռումես և լռումես: Որտեղից այդ-  
քան համբերութիւնն զարմանալի գործ!

## VI.

ՊՅԼԻՑԻԿ (Քաղաքագէտ):

Երբ ես վերադաշտայ Հունեանի մօս, նա արդէն տան էր  
և սպասումէր ինձ: Մենք խօսումէինք նորա հետ սորա—նորա  
և փոքր ինչ և քո վերա, այլև ծաղըէինք անում քեզ; Խօս  
սումէինք իմ առաջադրութիւնների, և իմ ճանապարհոր-  
դութեան վերա արտասահմանում; Վերջապէս վճռեցինք և  
այն, որ կարելի է կրկին չդառնամ դէսի այս ..... Կով-  
կասը: Նիկողօսը ցանկացաւ ունենալ իմ Փօսօգրաֆիկական  
պատկերը, և որովհետև ես պատրաստ չ'ունէի, խոստացայ  
ճաշեց յետոյ գնալ և նկարել տալ: Նիկողօսը ճաշումէր տան  
և, ինչպէս Թիֆլիսի մէջ առհասարակ, ուտումէր և խմումէր  
լու; ես յետ չ'էի մնում: Ճաշի ժամանակ մեր խօսակցութիւնը  
մանաւանդ կենդանութիւն ստացաւ: Նիկողօսը իհարկէ հայ-  
հոյումէր շատերին, և այստեղ ես յետ չ'մնացի: Ակսեցինք  
միասին հայհոյել թէ աջ թէ ձախ և տաքացանք մինչեւ այն  
աստիճան, որ չնկատեցինք նաև ծառաի երկումէր, չ'էր հասկանում  
մեզ: Միթէ կարելի էր այնպէս կռվել և փառաւորապէս ճա-  
շել, ինչպէս մենք էինք անում? Եւրոպաին ևս հասաւ մե-  
ղանից, իսկ Ասիաի մասին—ինչ ասել կայ: Մենք այն ժամա-  
նակ միայն մոքի եկանք, երբ ճաշը վերջացրինք: Յետոյ սկը-  
սեցինք ծիսել, սուրճ խմեցինք, բայց արդէն չ'ինք կովում,  
թէև վայրապար ախ էինք քաշում, — այս իհարկէ չ'էր արգե-  
լում: մեզ լաւ սուրճ խմել և գեղեցիկ թարաքօ ծիսել:

— Ի՞նչ է, կ' գնաս պատկերդ հանել տալու? հարցրեց Նիկողօսը:  
— Գնանք:

Մենք վեր առանք մեր գլխարկները և տունից դուրս եկանք:  
Ճանապարհին բարձրացաւ զարհուրելի փոշի; աչքերս լովեցան,  
չ'ինք կարողանում շունչ քաշել, մանաւանդ լաւ ճաշից  
յետոյ: Մենք ինչպէս որ է հասանք առաջին փօսօգրաֆի բը-

նակարանը : Ոռաջին սենետի մէջ տեսանք մենք , բացի ֆօտոգրաֆից և նորա ընկերից , հինգ—վեց այցելուներ ; նոքա , կարծումեմ , մտելին այնտեղ խօսելու կամ ապահովելու փոշուց : Նոքա բոլորեւեան տեղացի էին , ինչպէս և ֆօտոգրաֆը և նորա ընկերը : Մենք ևս նստեցանք ևս սկսեցինք նայել պատկերին : Նիկողոսը գանում էր նոյա մէջ իւր բարեկամներին և զանազան նկատողութիւններ էր անում : Մենք խօսում էինք ուսուերէն : Ցետոյ մեզ մօտեցաւ ինքն տէրը , մենք հարցրեցինք գինը և ես գնացի հանվելու , իսկ Նիկողոսը մընաց նայելու : Ֆօտոգրաֆի ընկերը մնաց հիւրերի հետ : Երբ մենք վերադարձանք , հիւրերը չկային : Մենք կրկին նստեցանք սպասելու , թէ ինչ կ'ասէ ֆօտոգրաֆը , լաւ նկարվեցաւ թէ չէ : Մինչ մենք նստած էինք , ֆօտոգրաֆի ընկերը դարձաւ զէպի ինձ հարցով :

— Խնդրումեմ ինձ ասացէք , դուք երկար ժամանակ է կովկասի մէջ էք !

**Ես** ասացի որքան :

— Իսկ առաջ Փարիզում էք բնակվել ? կրկին իմ ընչացքներս ինձ ֆրանսիացի կարծել տվեցին ! բայց ես չկամնալու ինձ գաղտնածածուկ պահել իմ խօսակցի առաջ , ասացի իմ ովլինելը : Նա մի փոքր զարմացաւ , ոչ թէ իմ , բայց իւր սխափելուն վերա , ինչպէս վերջում երևեցաւ :

— Բայց մենք այսուղ առանց ձեզ խօսում էինք , շարունակեց նա , ձեզ ֆրանսիացի կարծելով և զարմանում էինք թէ դուք ինչպէս մաքուր ուսուերէն էիք խօսում : Բայց զորանից մենք լսեցինք , ինչպէս դուք քանի մի խօսք ֆրանսիարէն ասացիք , և անկասած կարծեցինք , որ դուք ֆրանսիացի էք .... , խոստովանում եմ , ուրախայանք ....

— Ի՞չի վերա , ընդմիջեցի ես զարմանալով :

— Մեզանից մին ասում էր , որ եթէ ֆրանսիացին խօսումէ այդպէս լաւ ուսուերէն , սորանով երեսումէ այն ազդեցութիւն , որը այժմ նուսերը ունին ֆրանսիացիների վերա . . . Մենք այս կերպով այս բացատրեցինք . . .

**Այս** ժամանակ մտաւ լուսանկարիչը և յայանեց , որ պատ-

Քերը լաւ է դուրս եկել; ես կանխիկ վճարեցի փողը, և Նիկո-  
ղոսին յանձնեցի ստանալ պատկերները. մին առնել իւր հա-  
մար, իսկ մնացածները ուղարկել ինձ № քաղաքը : Մենք դուրս  
եկանք, ես գնացի սափրիչի մօտ, որ Հայ էր, բայց տունը պա-  
հումէր Փրամնսիական ձեռվ, և կտրել տվեցի մօրուքս :

## VII.

## ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ:

**ՄԵՆՔ** անցնումէինք մատենադարանի մօտ :

— **Գիտես** ինչ կայ, ասացի ես Նիկողոսին, ես կամենումեմ  
մանել ձեր մատենադարան տեսնել մատեանների ցուցակը, կա-  
րելի է գտնեմ այն, ինչ որ ինձ շատ հարկաւոր է :

— **Ինչէ քեզ հարկաւոր?** կարելի է կամենումես մի վկայու-  
թիւն գտնել?

— **Հա.** ինձ անշուշտ հարկաւոր է մի վկայութիւն; ես դա-  
դարեցրեցի մի նշանաւոր աշխատութիւն այս պատճառով: Ինչ  
է, մտնումենք?

— **Ու՞՞՞**

**Մատենադարանը :**

— **Հա,** մոտիր, եթէ կամենումես: Բայց դու զեռ չգիտես,  
որ մեր մատենադարանը շատ լաւ է և բացի սօրանից տւնի  
մի գերազանց արժանաւորութիւն... .

— **Աւելի լաւ:** աւելացրեցի ես, եթէ լաւ է, ուրեմն ես  
հաւասար եմ գտնել այնտեղ այն, ինչ հարկաւոր է ինձ:

— **Կարելի է և գանէիր, եթէ սա չ՛ունենար այդ բացա-  
ռական արժանաւորութիւն...**

— **Առաջ ինսդրումե՛մ, ինչես ասում?** ես քեզ չեմ համ-  
կանում... . ինչ արժանաւորութիւնն սկսեցի, ես տաքանալ:

— **Աս միշտ կողպված է:**

— **Այս ինչ ասելէ:** Ինչե է կողպված?

— **Գիտեմ,** որ կողպված է և ուրիշ ոչինչ... . մի օր կար-  
գաւորումեն, մի օր ընտրումեն, մի օր շնումեն, և միշտ  
կողպվածէ:

— **Եւ ոչ ոք չէ գնում?**

— Զարմանալի մարդ ես Ճշմարիտ! Միթէ խողովակից կարելի է մտնել?

— Հա ճշմարիտէ, համաձայնեցայ ես վերջապէս :

Ինչ անսառ ես չկարողացայ վկայութիւն գտնել...

## VII.

ՓԱՐԻԶ:

**ՄԵՆՔ** զբօսնումէինք երկար ժամանակ բուլվարի և պարտէնի մէջ: Վերջապէս բոլորովին մթնացաւ: Այժմ գնանք իմ մօտ, հրաւիրեցի ես նիկօնն; խմենք թէյ, ուտենք մի փոքր ինչ և ես կ'երթամ: ՄԵՆՔ գնացինք:

Հարկաւոր է քեզ զիտենալ, բարեկամ, որ անյաջով հանգամանքների գօրութիւններ, որոնք ինձ պատահեցան այստեղ այնպէս մեծէին, որ ընայելով քո զգաստացնելուն և իմ սեփական չկամենալուն, ես պիտի իջևանէի ֆարիզ տաված հիւրատան մէջ: Բոլոր հիւրատուններ լցված էին: Փարիզը առաջեան ոչչս ցեխոտ էր, անմաքուր և պատրաստ աւելորդով առանելու: Ես պահանջեցի մի շեշ դինի; բերեցին: Ես ինքս տեսայ, ինչպէս ծառան վազեց դինու համար պանդոկը:

— Ինչ արժէ շեշը? հարցրեցի ես ծառակից, գինու ճաշակը առնելուց յետոյ:

— 40. կոպէկ:

— Լուպէս 40 կոպէկ, երբ այսպիսի գինին նոյն պանդոկի մէջ, որտեղից գուր բերեցիր, արժէ 20 կոպէկ?

— Պանդոկի մէջ իսկապէս 20 կոպէկ է, բայց ոյստեղ 40 կոպէկ է; պակաս չէ կարելի:

Ճանապարհ ընկնելուց առաջ բերեցին ինձ հաշեւ և նորամէջ բոլորը մին երկուսով նշանակված: Ես և նիկողօսը ողջունեցինք միմեանց. Ժամանակ էր ճանապարհ ընկնելու...և մի քանի ժամից յետոյ ես արդէն ճանապարհի վերս էի դէպի №.....

Ահա, բարեկամ, ես հաղորդեցի քեզ ամենայն արդար խղճով բոլոր տեսածս և լսածս մի օրի մէջ այս կէս—երապական, կէս—ասիական քաղաքում: Եթէ ես վերադառնալու լինիմ, կ'աշխատեմ այնտեղ քանի մի օր անցկացնել և այն ժա-

մանակ աւելի մօտ կ' ծանօթանամ նորա հետ և հաշիւ կ' տամ  
քեզ, — եթէ թոյլ կ' տաս և եթէ չեմ մեռնի մինչեւ այն ժա-  
մանակ: Ուրեմն եթէ չեմ մեռնի, մինչեւ ց' կրկին տեսութիւն:  
Մենք դեռ կ' տեսնվինք:

Ա. Պ. . . . . ունի:

~~~  
**Սորընտիր զինտորի նամակ Ա. Փրիկարից իւր նորա-  
հարսի մօտ, Գյուանսիա:**  
(Թարգման" բերանմէից)

Ողջոյն քեզ, ընկեր. . . . ահա իմ լուրեր.  
Մեր խիստ պատերազմ վերջացաւ արգէն;  
Փառք և յաղթանակ սուացան ուրիշներ,  
Բայց ես զրկվեցայ իմ քաջ ձեռներէն. . . .

Թռէպէտ մենք սակաւ չ' չարչարվեցանք  
Փոխադարձ անխնա այն տաստիկ կրակում:  
Բայց և յաղթեցինք, բոլոր առանք;  
Միայն երկու գունու մնացին իմ մէջքում:  
Հիւանդանոցում արդ մեռնումեմ ես,  
Եւ արիւնահան մարմինս դնեց;  
Ահա այն ոսկին ուղարկումեմ քեզ,  
Որ մարմնիս համար նա արդէն ինձ տվեց:

Եւ որովհետեւ ես պէտքէ մեռնիմ  
Եւ իմ մահ արդէն առաջսէ կանգնած,  
Ես մոտածեցի, որ, սիրելեդ իմ,  
Գոնէ դու շահվիս, չլինիս զրկված:

Ո՛հ. . . դառնէ լինել ինձ մենակ թաղլած  
Երկրի մէջ հեռու իմ չայրենիքից,  
Լաւ էր, եթէ տան լինէի մեռած,  
Զրկվելու չ' էի քո արտասուքից:

Իմ վերա գուցէ խաչ կանդնած լինէր,  
Իմ զերեղմանիս — փորձելու իմ սէր —  
Գուցէ թէ գար տես սիրեցած ընկեր,  
Եւ սիրումեմ ձայն նա նորէն լսէր:  
Երբ ես մօրս հետ բաժանվումէի,

Ծերու հի սանտիկ հիւանդ էր քարդին, և կը առ քանի  
Այժմ կ'իմանայ մեռել է որդի ու ու ձեզ — որպէս  
կ'մեռնէ անշուշտ նա նոյն խոր բռնին մաս ու պատճեն

**Ս**ա գուցէ հիւանդ չէ այժմ առաւելք այս զան  
Բայց երբ կ'կարդայ նա այս իմ նամակ.

Զի կարողանայ ոչ մի թուր ասել . . .

Նոյն տեղ կ'մեռնէ նոյն խոր ժամանակի պիտակուր

**Ի**մ փոքրիկ շնիկ իմ քարի ֆինդալ —

Ուղարկումեմ քեզ ինձանից ընծառ . . .

Սիրիք և չտաս նորան իմանալ . . .

Ո՛չնոզվ այս իմ յանկարծակի մահ:

**Ֆ**ինդալ յոյս ռւնէր այս գիտեմ արդար —

Տեսնել իւր տէրին քաջ կօռնէտ դարձած,

Եւ կոկսէ լալ անողը բարար,

Երբ նա կ'իմանայ, թէ ես կամ մեռած:

**Ո**ղջ եղի՛ր . . . մի՛լար . . . ես հրաժարվումեմ . . .

Ես քեզ չեմ կարող տեսնել առաւել . . .

Զօրքում . . . ուր արդէն ահա մօնումեմ . . .

Ո՛չ ոք կարող չէ արձակուրդ առնել . . .

**Ե**ւ քահանաին ահա կանչեցին ինձ պատրաստումեն ինձ

Ինձ պատրաստումեն հեռու ճանապարհ . . .

Ահա իմ վճիռ արդէն կարդացին . . .

**Ո**ղջ եղի՛ր . . . ինձ մի՛ մոռանար:

15 զեկոտ. 1864. իշխան բազրատունի:

Հոչակաւոր Բերանմէն ծննիցաւ Փարիզում, օգոստոսի 19-ին, 1780 թւականին, իւր աղքատ և ծնր դերձակու—պապի տան մէջ : Իւր ծնունդի օրին նա անվանվեցաւ Պետրոս—Յովիչաննէն, արևմտան Եւրոպացիների սովորութեան համամատ, որոնք տալիս նն մանուկին երկու երեք մինչև տասն երկու անուններ, Բերանմէի առաջնական Պետրոս Յովիչաննէն անուններ էին արդարեւ բարի նախառաջութիւնն նորա ծնողներ, ինչպէս երեսումէ, չունեցան մեծ ներգործութիւն նորա կրթութեան վերա: Ինն տարեկան մանուկ Բերանմէն գնաց Պետրոս քաղաքը իւր հօրաքրոջ, մօտ: Ա. յատեղ նա առաջն անգամ միւսեց կարդալ Տելմաքի Արկածներ և Ռասինի և Վոլտերի քանի մի յօդվածներ : Տասն և չորս տարեկան նա մասաւ Պետրոսի նախակրթական վարժարանը, որտեղ տօներին աշակերտները սովորութիւն ունեին ճառելը կարդալ

ուղարկել վարժարանի բարեկամներին, Ահա այսակ առաջին անգամէք, որ բերանժէն վեր առաջ դրիչը ձեռին և իւր գրվածներ կարդացողներին ցցանեց իւր առաջին փորձերով, թէ ինչ է սպանում նորան ապագաի մէջ, բայս սորտանից վարժարանի մէջ նու ծանօթացաւ պասմութեան և աշխարհազրութեան հետ, որոնք աւելի կապեցին նորա մասաղ սիրաը հայրենիքի հետ:

Տասն և եօթ տարեկան վերագարձաւ դէպի Փարիզ, Տասն և ութ տարեկան հասակում առաջին անգամ անցաւ նորա գլխից ուսանաւորներ գրելու միտք, թատրոնական խաղարկութիւնների ներգործութեամբ, կօմեդիան նորա առաջին փորձ էր. նա զրեց «Հերմաֆրօդիտաներ» այսինքն «Երկառականեր» անուստով մի կօնեղիս, որի մէջ նա ծիծաղումէր տկարամիտ, մնավիառ և կամուցի մարդիկների, բայց և լիքնապաշտ և խառնկիչ կամունց վերաբ բայց անմահ Ֆոլիէոի հրաշալի աշխատաթիւնները ուշադրութիւններ կարդալուց յետոյ նա դադարեց, այս մեծ ուսուցչի պատուի համար էր. և յս անսակ զժվար աշխատաթիւնները Մոլիէոը և Լա Փօնտէնը նորա միրական հեղինակներ էն այն ժամանակ, նա ուսումնասիրամէր նորա զատուլութեան, ուսանաւորների, ոճի ամենայն մանրամասեր և այս ճանապարհով կարողացաւ վերջում բերանժէն իմանալ, զդալ, զնահասել իւր սեփական տալանալ:

Բայց այս միջոցում նորա նիւթական յրութիւնը համեմատ չէր բարյականին, բերանժէն հասան դառն կենսական օրեր, այս կարօտութեան մէջ շնորհալի երիսասարդը ծանօթացաւ աւելի մօտ ժողովուրդի ամենայն զասերի և ամենայն պայմանների հետ. Եւ այս ժամանակում ահա տարածվեցան նորա այս երգերը, Յակոբուսուն և «Հին հանդերձ»: Այս նորա Վագենտիլ-Էլլարի թագաւորութեան ժամանակ էր, բանաստեղծի սրտի մէջ; Շուտով փոխվեցաւ և նորա նիւթական դրութիւնը, Ֆրանսիաի Սեծ Հիւագատուի եղբայր Վիւիէն Բօնապարտը ընդունեց բանաստեղծն ուրուլ և սկսեց վեհանձնաբար սրաշտագնել նորան:

Այս հասակում, (նա էր քանի և ութ տարեկան) որ այնքան լիէ կեանքով, ուր ներկան, որքան կատարեալ կոչվիներ, չէ բաւականացնութիւնում երեակայութեան եռամողը, այս հասնակում, ուր պայման երեսում իրեն կարմոր պիտոյք, ուրից յետոյ բոլորից առաջ բերանժէն զրաւեց զրականական փառքը: Մանկական հայրենասիրութիւնն եռ չէր թողել նորան:

1809 թիւն բերանժէն մասու Համալսարանական կառավարութեան մէջ իրեն զրադիր, սատանալով երկու հաղար ֆրանկ տարեկան ոռնիկ, ուր և մնաց տասն և երկու տարի: Այսուղ նա շարունակումէր իւր իսաշող պարագանեղնքը թատրոնական երգելի գրվածներով և հոչակվեցաւ իրեն կատարեալ բանաստեղծ իւր և բարի մարդիկների Աստուած (Le Dieu des bonnes gens): երգը գրելուց յետոյ,

Մի օր բերանժէն ճաշի էր պ. էտիէնի մօտ, որ երեւլի կօմիքական հեղինակ էր և հռչակաւոր զրող, և զիտէր իւրան ցոյց տալ խելացի որպէս իւր զրվածներով, նոյնու և իւր վարքով Հասարակագիտութեան, կայսրութեան և Վերականգման ժամանակին Հասարակութիւնն էր բազմաթիւ և ճաշից յետոյ բերանժէնին խնդրեցին երգել: Նա երգեց և բոլոր բազմութեան ծափանարութիւնները դդրդեցին տունը: Այստեղ բերանժէն հաւատաց, որ նա կարողէ լինել բանաստեղծ, երդիչ—բանաստեղծ:

Այսուհետեւ նա սկսեց գրել՝ երգերը դրականական և քաղաքական նշանակութեան և արժանաւորութեան: Հ. Լաֆիտատի մօտ պաշտօն, Ակադեմիաի մէջ աթոռ, թագաւորական դրան հրաւէր, ոչինչ չկարող զայտ նորան դրաւել. . . . Նա հասկացաւ իւր նշանակութիւնը որպէս ժողովրդական երգչի—և մնաց հաւատարիմ իւր կոչման, որով հասաւ այն ափեղերահոչակ փառքին, որը այսօր ամբողջ Ֆրանսիան, և ինչ եմ ասում Ֆրանսիան, ամբողջ Եւրոպան արժանապէս տալիս է անմահ երդչի յիշատակին:

Քանի նեղութիւններ, քանի հալածանքներ, քանի բանտարկութիւններ կրեց մեծ բանաստեղծը իւր ճշմարտասիրութեան և ազատամտութեան պատճառով, բայց այսու ամենույնիւ նա մնաց ժողովրդական բանաստեղծ ։

1857 թւի յուլիսի 18 օրը տիրութեան և մութ՝ օր էր ամբողջ Ֆրանսիաի համար բաղմամարդ Փարիզոր պատաճ էր տրամտութեամբ և նեղութեամբ. այդ օրին որբացաւ Փրանչական ժողովուրդը—հանդաւ բանաստեղծը. . . .

Այս անգամ յարմար դասեցինք այսքան միայն ասել ընթերցողներին Ֆրանսիաի ժողովրդական Սեծ բանաստեղծի մասին. Գուցէ ուրիշ ժամանակում մենք կարողանանք մասուցանել բերանժէի ամբողջ կենսագրութիւնը, նորաներգործութիւնը և նշանակութիւնը՝ Փրանչական ժողովուրդի և դրականութեան մէջ, և որովհետեւ սիրելի է միշտ կարդալ ամեննեցուն անկեղծ և անսուտ գրվածը, պոտջարկումնենք այժմ ցանկացողներին կարդալ մի դեղեցիկ յօդված բերանժէի վերա 1861 թւի ՀՀիւսիսափայլ օրագրի մէջ:

Խմբագ: